ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԻԴՐԱՅԻՈՒԹՅՈՒՆ

Ազգագրես

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԻԳՐԱՃԻՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՒԱՆ
ԱՆՏԱՐԵՍ
2016

ՀՏԴ 32.001:94(479.25)
ԳՄԴ 66.0+63.3(5Հ)
Տ 506

LEVON TER-PETROSSIAN

PEACE
CONCILIATION
GOOD NEIGHBORHOOD

Erevan 2016

Տեր-Պետրոսյան Լեւոն
Տ 506 Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն/ Լեւոն Տեր-Պետրոսյան; ՀՀ Առաջին Նախագահի արխիվ; Խմբ.՝ Աշոտ Սարգսյան; Կազմ.՝ Ավետիս Ավագյան. – Եր.: Անտարես, 2016. – 96 էջ:

ՀՏԴ 32.001:94(479.25)
ԳՄԴ 66.0+63.3(5Հ)

ISBN 978-9939-76-005-6

© Տեր-Պետրոսյան Լ., 2016

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն ժողովածուն մտահղացվել է Հայ Ազգային Կոնգրեսի՝ դեկտեմբերի 17-ին կայանալիք համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի առիթով: Ելույթը հիմնականում վերաբերում է վերջին շուրջ երեք տասնամյակում Հայաստանի, հայ ժողովրդի համար ամենաճակատագրական դարձած՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, ինչպես նաեւ այսօր դրա հետ աղերսվող ներքաղաքական այլ խնդիրների: Նկատի ունենալով հարցի կարեւորությունը, ելույթի ֆունդամենտալ բնույթը, կարգավորման առկա գործընթացները, նաեւ ժամանակի մեջ խնդրի պատկերն ամբողջացնելու համար, նպատակահարմար գտնվեց այն հրապարակել Հայաստանի հիմնադիր նախագահի՝ ղարաբաղյան թեմայով մի քանի այլ, նույնպես ֆունդամենտալ ելույթների ու հոդվածների հետ միասին: Դրանք են՝ հայտնի «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը (1 նոյեմբերի, 1997թ.), Անվտանգության խորհրդի նիստում ելույթը (8 հունվարի, 1998թ.), 2007թ. առաջին հանրահավաքային ելույթից նույն հարցին վերաբերող գլուխը (հոկտեմբերի 26) եւ Ապրիլյան պատերազմից հետո «Իլուր» կայքին տված հարցազրույցը: Այս համադրմամբ լրանում եւ ամբողջանում են խնդրի բոլոր ասպեկտները, որոնք չէին կարող տեղ գտնել մեկ ելույթում: Այդ կերպ հստակ ի ցույց է դրվում նաեւ Ղարաբաղյան հիմնահարցում Հայոց Համազգային Շարժման, Հայ Ազգային կոնգրեսի եւ անձամբ Լեւոն Տեր-Պետրոսյանի մոտեցումների հետեւողականությունն ու անխոտոր շարունակականությունը:

ԵԼՈՒՅԹ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(17 դեկտեմբերի, 2016թ.)

Իմ վերջին հոդվածներից մեկում ես նշել էի, որ «Հայաստանի բոլոր չարիքների՝ սոցիալական ծանրագույն վիճակի, բնակչության աղքատության, զանգվածային արտագաղթի, բանակի թերզինվածության, ապօրինի ընտրությունների, արդարադատության չգոյության, ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ոտնահարման արմատը կոռուպցիան է՝ պետական պաշտոնյաների կողմից ազգային հարստության համատարած ու անհագ թալանը» (iLur.am. 19.10.2016; «Չորրորդ իշխանություն». 20.10.2016): Սակայն սա այսբերգի միայն տեսանելի մասն է: Անտեսանելին 1998 թվականից ի վեր Հայոց պետականաշինության հիմքում դրված քաղաքական փիլիսոփայությունն է, այլ կերպ ասած՝ Ղարաբաղյան ստատուս-քվոն պահպանելու եւ հարյուր տարի էլ շրջափակումների պայմաններում զարգանալու ռազմավարությունը: Թե ժամանակին կանխատեսված ինչպիսի կործանարար հետեւանքների է հասցրել այս փիլիսոփայությունը, կարծում եմ, ավելորդ է պարզաբանել: Փաստն այն է, որ ժողովրդագրական, տնտեսական եւ ռազմական առումներով 1998 թվականին մենք ունեինք մի երկիր, իսկ այսօր ապրում ենք բոլորովին մի այլ երկրում: Դա նշանակում է, որ այն կարեւորագույն խնդիրը, որը շատ

ավելի ուժեղ վիճակում կարող էինք լուծել 18 տարի առաջ, այժմ հարկադրված ենք լուծել անհամեմատ թուլացած վիճակում: Իսկ մի քիչ էլ հապաղելու պարագայում անխուսափելիորեն կհայտնվենք սրանից վատթար դրության մեջ, կրկնելով 1920 թվականի արկածախնդրությունը, երբ, ձգտելով առավելագույն տարածքային ընդարձակման, կորցրինք Հայաստանի Հանրապետության ունեցած տարածքի մոտավորապես կեսը:

Թվում էր, թե 2008 թվականի տնտեսական ճգնաժամի դեռեւս չհաղթահարված հետեւանքները, արտագաղթի ահագնացող տեմպերը, վտանգավոր չափերի հասած պետական պարտքը, դրա հետ կապված դեֆոլտի սպառնալիքը եւ մանավանդ ապրիլյան պատերազմի առաջացրած ցնցումը սթափեցնող ազդեցություն կունենան Հայաստանի իշխանությունների վրա՝ նրանց ստիպելով արմատապես վերանայել Ղարաբաղի հարցում իրենց որդեգրած ապակառուցողական, աղետաբեր քաղաքականությունը, եւ նշված մարտահրավերները դիմագրավելու բոլորովին այլ ռազմավարություն մշակել: Սակայն դատելով վարչախմբի արձագանքից, կարծես թե, այս հարցում էլ մեզ հիասթափություն է սպասում, քանի որ ակնկալված ռացիոնալ քայլերի փոխարեն, նա հրապարակ է նետել մի նոր անհեթեթ գաղափարախոսություն, որը կրկին մեզ դեպի փակուղի է առաջնորդում, դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով: Խոսքը վերաբերում է «ազգ-բանակ» ձեւավորելու մտահղացմանը, որը ցավալիորեն տեղ է գտել անգամ նոր կառավարության ծրագրում: Մի կողմ դնելով հարցի բարոյական կողմը, որը վերաբերում է որպես «ազգ-բանակի» կառուցման առաջին քայլը դիտվող նոր հարկատեսակի կիրառմանը, ես կանդրադառնամ միայն այդ հասկացության քաղաքական բովանդակությանը:

* * *

Դրա համար, սակայն, նախեւառաջ անհրաժեշտ է պարզել, թե իրականում ինչ է թաքնված տվյալ հասկացության տակ: Ամազոնուհիներին չհաշված, պատմությանը հայտնի է «ազգ-բանակի» ստեղծման երեք հաջողված դեպք՝ առաջին երկուսը միջնադարյան Մոնղոլիայում եւ Շվեյցարիայում, իսկ երրորդը՝ ժամանակակից Իսրայելում, նկատի առնելով, անշուշտ, որ միջնադարի պարագայում «ազգ» բառն օգտագործվում է պայմանականորեն: Երեւույթի մասին տարրական պատկերացում կազմելու համար, կարծում եմ, արժե թեկուզ համառոտակի անդրադառնալ նշված դեպքերից յուրաքանչյուրին:

XIII դարի սկզբին Չինգիզխանը, զենքի ուժով միավորելով միմյանց դեմ դարերով մարտնչած մոնղոլական տասնյակ ցեղերին, միջցեղային հարաբերությունների ավանդական համակարգը փոխարինեց բանակային կուռ կառուցվածքով: Բոլոր տղամարդիկ զորակոչվեցին բանակ՝ հերթագայությամբ ծառայելով տասնյակներից, հարյուրյակներից, հազարյակներից ու տասհազարյակներից (թուման) կազմված նրա ստորաբաժանումներում: Դա մի կողմից արթնացրեց մոնղոլների «ազգային» ընդհանրության գիտակցությունը, մյուս կողմից՝ հնարավորություն ընձեռեց ստեղծելու մի այնպիսի ահեղ զինական ուժ, որի շնորհիվ այդ փոքրաթիվ ժողովուրդը կարճ ժամանակի ընթացքում կերտեց աշխարհի ամենաընդարձակ ցամաքային կայսրությունը, տիրելով Խաղաղ օվկիանոսից մինչեւ Լեհաստան ու Անատոլիա ընկած եւ իրենից գրեթե 200 անգամ ավելի բնակչություն ունեցող տարածքին: Այդ հսկայածավալ կայսրությունը, սակայն, գոյատեւեց ընդամենը հինգ-վեց տասնամյակ, Կուբիլայ Մեծ խանի մահվան տարում (1294թ.) բաժանվելով չորս մասի՝ նվաճումների դադարումից հետո մոնղոլների

ռազմական էներգիայի սպառման, կայսրությունը միավորող գաղափարախոսություն ձեւավորելու անկարողության եւ գլխավորապես մոնղոլ ժողովրդի փոքրաքանակության պատճառով:

Ինչպես նշվեց, «ազգ-բանակի» ձեւավորման հաջորդ հաջողված փորձը շվեյցարականն է, որի դրդապատճառներն ու հետապնդած նպատակները, սակայն, տարբերվում են մոնղոլականից: Եթե մոնղոլների պարագայում դա ուղղված էր իրենց նվաճողական նկրտումներին հագուրդ տալուն, ապա շվեյցարացիների մոտ թելադրված էր թշնամական միջավայրում սեփական երկրի գոյատեւումն ապահովելու պահանջից: Գերմանա-ֆրանսա-իտալական խառը բնակչություն ունեցող ալպյան հովիտների ավատատիրական իշխանությունները շվեյցարական դաշնության ձեւավորման ավելի քան հինգ հարյուր տարիների ընթացքում (1291–1815 թթ.), հարկադրված լինելով դիմագրավելու ահեղ հարեւանների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ավստրիայի շարունակական հարձակումները, ապավինել են բացառապես սեփական ուժերին եւ մարտունակ բանակի կերտումը դիտել որպես ազգային գերխնդիր: Ու թեեւ վերջին 200 տարիներին Շվեյցարիան, օժտված լինելով չեզոք երկրի կարգավիճակով, արտաքին վտանգների չի ենթարկվել, եւ Եւրոպական մայրցամաքում տեղի ունեցած բոլոր, այդ թվում, առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմները շրջանցել են նրան, ավանդույթի ուժով, այսօր էլ բանակը մնում է շվեյցարացիների համազգային հոգածության առարկան, որում զորակոչվածի, պայմանագրային ծառայողի, կամավորի եւ պահեստազորայինի հանգամանքով ներգրավված են 18-ից 50 տարեկան բոլոր առողջ տղամարդիկ: Պատահական չէ, որ ոմանց կողմից Շվեյցարիան, մեկ շնչին ընկնող զինվորականների թվով, համարվում է աշխարհի ամենառազմականացված պետությունը, որն ի վիճակի է, փայլուն պատրաստված պահեստազորի մոբիլիզացիայի շնորհիվ, մեկ-երկու օրում տասնապատկել իր զինված ուժերի թվաքանակը:

Քանի որ «ազգ-բանակ» գաղափարի հայ ջատագովներն ընդօրինակման առարկա են համարում իսրայելյան փորձը, հարկ է առաջանում դրան անդրադառնալ մի փոքր ավելի մանրամասնորեն: «Ազգ-բանակի» իսրայելյան ծրագրի իրականացման դրդապատճառն, ըստ էության, չի տարբերվում շվեյցարականից, թելադրված լինելով թշնամական միջավայրում ժողովրդի անվտանգությունն ու պետության գոյատեւումն ապահովելու միեւնույն պարտադրանքից: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1947թ. նոյեմբերի 29-ի բանաձեւի հիման վրա Պաղեստինը բաժանվեց երկու հավասար մասի՝ տասնչորսհազարական քառակուսի կիլոմետր տարածքներով: Իսրայելը ճանաչեց այդ բանաձեւը եւ Պաղեստինում բրիտանական մանդատի ժամկետի սպառման օրը, 1948թ. մայիսի 14-ին, հռչակեց իր անկախությունը: Պաղեստինցի արաբներն ու արաբական երկրները հրաժարվեցին ենթարկվել ՄԱԿ-ի բանաձեւին եւ հաջորդ օրն իսկ պատերազմ հայտարարեցին Իսրայելին, սակայն ջախջախիչ պարտություն կրելով, հարկադրված զինադադար կնքեցին: Այսպիսով, անխտիր բոլոր հարեւան արաբական պետություններից համակեցության մերժում ստանալով, Իսրայելն, իր գոյությունը պահպանելու համար, ստիպված եղավ բացառապես ապավինել սեփական ռազմական ուժին եւ հնարավորինս հզորացնել իր բանակը, ինչի շնորհիվ կարողացավ հաղթանակներ տանել նաեւ հետագա պատերազմներում: Արաբա-իսրայելյան հակամարտության մթնոլորտն արմատապես բարելավվեց 1978–1979 թթ. Քեմփ-Դեվիդյան համաձայնագրերի ստորագրումից եւ Եգիպտոսի ու Հորդանանի հետ Իսրայելի կնքած հաշտության պայմանագրերի վավերացումից հետո: Իսկ 1993 թվականին Իսրայելի պետությունը

ճանաչվեց նաեւ Պաղեստինի Ազատագրության կազմակերպության (PLO) կողմից, ինչը սկիզբ դրեց Իսրայելա-Պաղեստինյան հաշտության գործընթացին, որը մինչ օրս դեռ չի ավարտվել: Հարկ է ավելացնել, որ գոյապահպանության եւ երկրի անվտանգության ապահովման գլխավոր առաքելության իրականացումից բացի, իսրայելական բանակաշինության ծրագիրը կողմնակիորեն նպաստել է նաեւ ազգային մի քանի այլ խնդիրների լուծմանը, մասնավորապես, բազմաթիվ երկրներից ներգաղթած տարալեզու ու տարամշակույթ քաղաքացիների խայտաբղետ զանգվածից ընդհանուր լեզվով ու մշակույթով միասնացած ժամանակակից ազգի ձեւավորման, գիտության եւ տեխնիկական մտքի սրընթաց զարգացման, ինչպես նաեւ ռազմա-արդյունաբերական համալիրում ներդրվող նոր տեխնոլոգիաները տնտեսության զանազան ոլորտներում կիրառելու առումներով: Իսրայելական զինված ուժերի առանձնահատուկ դերի արտահայտությունն է նաեւ այն, որ զինապարտությունը տարածվում է ոչ միայն տղամարդկանց, այլեւ կանանց վրա եւ, որ այդ երկրի վերջին վաթսուն տարիների ութ վարչապետերից երեքը (Ռաբին, Շարոն, Բարաք) եղել են գեներալներ, իսկ երկուսը (Բեգին, Շամիր)՝ երկրապահական «Իրգուն» կազմակերպության լեգենդար հրամանատարներ:

Ժամանակի սղությունը թույլ չի տալիս ավելի հիմնավորապես լուսաբանել «ազգ-բանակի» ստեղծման պատմական այս նախադեպերը եւ խորանալ դրանցից յուրաքանչյուրի բովանդակության առանձնահատկությունների, տնտեսական, ժողովրդագրական եւ հասարակական զարգացումների վրա նրանց ունեցած ազդեցության եւ այլ հարցերի մեջ: Կարծում եմ, սակայն, որ այս թռուցիկ ակնարկն անգամ հստակ պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպիսի դրդապատճառներ ու գործոններ են ազդել նման գաղափարի հղացման վրա, եւ որքան ռեսուրսներ են պահանջվել դրա իրականացման համար, նկատի ունենալով, անշուշտ, թե՛ մարդկային, եւ թե՛ նյութա-տնտեսական ռեսուրսները: Դրդապատճառների վերաբերյալ, ինչ որ պետք էր, արդեն ասվեց: Իսկ ռեսուրսների մասին ավելորդ է խոսել, որովհետեւ քանի խոսքը վերաբերում է հաջողված փորձերին, նշանակում է, դրա համար անհրաժեշտ ռեսուրսները լիուլի բավարարել են:

* * *

Ներածական այս հիմնադրույթներից բնականաբար բխում է, որ «ազգ-բանակի» կառուցման հայկական տարբերակի ճարտարապետները պարտավոր են, առաջին հերթին, պատասխանել հետեւյալ երեք հարցերին. ինչպիսի՞ պարտադրանքից է թելադրված այդ ծրագիրը, ի՞նչ խնդրի լուծմանն է կոչված այն, եւ որքա՞ն ռեսուրսներ են պահանջվելու նրա իրականացման համար: Խախտելով հարցերի հաջորդականությունը, նախ անդրադառնանք ռեսուրսներին: Ի տարբերություն, որպես օրինակ բերվող, Իսրայելի, որի հրեա բնակչության թվաքանակը անկախությունից ի վեր անշեղորեն աճել եւ 600 հազարից այսօր հասել է շուրջ 7 միլիոնի, Հայաստանի բնակչությունը 1988թ. երկրաշարժից ու խորհրդային փակ սահմանների փլուզումից հետո անընդհատ նվազել է՝ մի գործընթաց, որն այս պահին էլ դադարելու կամ թեկուզ դանդաղելու որեւէ միտում չի դրսեւորում: Մարդկային ռեսուրսների առումով Հայաստանի իշխանությունները մեծ հույսեր են կապում Սփյուռքի հետ: Ինքս սփյուռքահայ լինելով, ինձ իրավունք եմ վերապահում ամենայն պատասխանատվությամբ հայտարարել, որ այդ ակնկալիքը բացարձակ ցնորք է եւ ինքնախաբեություն: Բավական է հիշեցնել, որ 1990-ականների եռամյա պատերազմին մասնակցել է ընդամենը 12 սփյուռքահայ: Այդ թիվը ժամանակին ցավով հրապարակել է ոչ այլ ոք, քան

պատերազմի բոլոր մանրամասներին տիրապետող Վազգեն Սարգսյանը:

Ինչ վերաբերում է նյութական ռեսուրսներին, ապա այստեղ էլ պատկերը նույնքան տխուր է, որքան մարդկային ռեսուրսների պարագայում: Հայաստանի տնտեսությունը, 1994-2008 թվականների որոշ վերելքից հետո սոսկալի անկում է ապրում, ընդ որում, ցավոք, առանց առողջացման որեւէ հեռանկարի: Ինչպես ասում են՝ թունելի վերջում լույս չի երեւում: Դա ամենեւին չի նշանակում, թե Հայաստանում ազգային հարստություն չի ստեղծվում: Անշուշտ ստեղծվում է, բայց 2001 թվականից ի վեր, բարձրաստիճան պաշտոնյաների կողմից դրա անխնա թալանի պատճառով ծախսվում է սեփական բիզնեսների զարգացման, շքեղ ապարանքների կառուցման եւ Աֆրիկայում առյուծի որսով զբաղվելու վրա, իսկ մնացյալ գումարը կուտակվում է արտասահմանյան բանկերում: Որպեսզի պատկերացնեք, թե ինչ ծավալի թալանի մասին է խոսքը, նշեմ, որ այն միանգամայն բավարար էր այսօր 300000 բնակչությամբ Ղարաբաղ եւ գերժամանակակից զինատեսակներով հագեցած բանակ ունենալու համար: Եթե Հայաստանի տնտեսության ներկայիս վիճակը ողբալի չլիներ, ապա իշխանությունները, զոհված ու հաշմանդամ զինծառայողների ընտանիքների կարիքները հոգալու համար, ոչ մի այլ պարագայում չէին ընդունի ժողովրդից 1000-ական դրամ մուրալու խայտառակ օրենքը, ինչը, առաջին իսկ քայլով «ազգ-բանակ» գաղափարը վարկաբեկելուց բացի, ծանր հարված հասցրեց պետության արժանապատվությանը, մեզ ծաղրի առարկա դարձնելով աշխարհի առջեւ: Նյութական ռեսուրսների առումով եւս առանձնապես հույս չպետք է դնել Սփյուռքի էական աջակցության վրա: Նախ՝ Սփյուռքն ինչո՞ւ պիտի օգնի Հայաստանին, որի հարստությունը թալանվում է սեփական իշխանավորների կողմից, եւ երկրորդ՝ երախտագիտությամբ գնահատելով հանդերձ

սփյուռքահայ բարերարների եւ հասարակ ժողովրդի կողմից անկախության շրջանում Հայաստանին ցուցաբերված մարդասիրական օգնությունը, չպետք է մոռանալ, որ այն երբեք չի գերազանցել մեր երկրի տարեկան բյուջեի երկու-երեք տոկոսը: Իսկ սա, եկեք համաձայնենք, չնչին նպաստ է մի այնպիսի ծախսատար ծրագրի իրականացման գործին, ինչպիսին «ազգ-բանակի» կառուցումն է: Անգամ եթե Հայաստանի ողջ տարեկան բյուջեն տրամադրվեր այդ ծրագրի իրականացմանը, դա նույնպես անբավարար կլիներ:

* * *

Այժմ անցնենք այն հարցին, թե ինչպիսի՞ պարտադրանքից է թելադրված «ազգ-բանակի» կառուցման հայկական ծրագիրը կամ, թե ո՞րն է դրա հղացման դրդապատճառը: Ինչպես տեսանք, մոնղոլների պարագայում դրդապատճառը այլ երկրներ նվաճելու նրանց ձգտումն էր, իսկ միջնադարյան Շվեյցարիայի եւ ժամանակակից Իսրայելի դեպքերում՝ թշնամական միջավայրում սեփական ժողովուրդների անվտանգությունն ու պետականության գոյատեւումն ապահովելու խնդիրը: Հայ ժողովրդի նվաճողական նկրտումների մասին ծիծաղելի է խոսել, եթե, իհարկե, նկատի չունենանք Բաքուն գրավելու, Արեւմտյան Հայաստանն ազատագրելու եւ ծովից-ծով Հայաստան ստեղծելու ցնորամիտ անուրջները: Ինչ վերաբերում է «ազգ-բանակի» ստեղծման հարցում անվտանգության ու գոյատեւման անհրաժեշտությունից բխող պարտադրանքին, ապա շվեյցարական փորձը պետք է լիովին զանց առնել, որովհետեւ միջնադարն ավարտվել է, եւ պետությունների հարաբերություններն այսօր կարգավորվում են միջազգային իրավունքի բոլորովին այլ սկզբունքներով: Թվում է, թե այս տեսակետից Հայաստանի խնդիրները համեմատելի են Իսրայելի

խնդիրների հետ: Իրոք համեմատելի են, սակայն լուրջ վերապահումներով:

Նշվեց արդեն, որ արաբա-իսրայելյան տեւական առճակատման հիմքը միջազգային իրավունքին հակասող այն իրողությունն է, որ արաբական երկրները հրաժարվեցին ենթարկվել Պաղեստինի բաժանման վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1947թ. նոյեմբերի 29-ի ընդունած բանաձեւին եւ Իսրայելի անկախության հռչակման հաջորդ օրը պատերազմ հայտարարեցին վերջինիս: Իսրայելին, հետեւաբար, այլ բան չէր մնում, քան ապավինել սեփական ուժերին եւ ձեռնամուխ լինել «ազգ-բանակի» կառուցման գործին: Այսինքն Իսրայելը ոչ թե կամովին է հանգել այդ մտքին, այլ իսկզբանե պարտադրված է եղել դիմելու նման բացառիկ քայլի: Ի դեպ, Եգիպտոսի ու Հորդանանի հետ հաշտության պայմանագրերի կնքումից եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո անգամ այդ պարտադրանքը չի վերացել, քանի որ 21 արաբական եւ իսլամական պետություններ, ՄԱԿ-ի կանոնադրության ոգուն հակառակ, այդպես էլ մինչ օրս Իսրայելի հանրապետությունը չեն ճանաչել, ինչը լրջագույն մտահոգության առարկա է շարունակում մնալ վերջինիս համար:

Իսկ այժմ տեսնենք, թե, անգամ բավարար ռեսուրսների առկայության պարագայում, ինչն է Հայաստանին ստիպում ընթանալ Իսրայելի ո՛րդեգրած ճանապարհով: Ի տարբերություն Իսրայելի, Հայաստանը ճանաչված է ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների կողմից, բացառությամբ Պակիստանի: Սահմանակից հարեւաններից միայն երկուսի՝ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ է, որ Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ չունի: Մյուս երկու հարեւանների՝ Վրաստանի ու Իրանի հետ իսկզբանե հաստատված են ջերմ բարեկամական հարաբերություններ, որոնք փոխշահավետության եւ աշխարհաքաղաքական նկատառումներով, ոչ

միայն բնավ խաթարելի չեն, այլեւ խորացման ու ավելի արդյունավետ համագործակցության հեռանկար են ցուցանում: Անկախությունից ի վեր Իսրայելը վեց լայնածավալ պատերազմներ է մղել իր չորս հարեւանների՝ Եգիպտոսի, Սիրիայի, Հորդանանի ու Լիբանանի դեմ (1948, 1956, 1967, 1973, 1982, 2006 թթ.), չհաշված Իրաքի միջուկային կենտրոնին հասցված օդային հուժկու հարվածը (1981թ.): Մինչդեռ Հայաստանը սահմանային ռազմական առճակատման մեջ է գտնվել միայն հարեւաններից մեկի՝ Ադրբեջանի հետ: Այս առումով, իմիջիայլոց, տեղին է նշել, որ ներկայիս Հայաստանի վիճակը տարբերվում է ոչ միայն Իսրայելի, այլեւ Հայաստանի առաջին հանրապետության վիճակից, որն իր գոյության երկուսուկես տարիների ընթացքում պատերազմել է իր չորս հարեւաններից երեքի՝ Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի հետ:

Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հակասությունների վերացումն ու բարիդրացիական հարաբերությունների հաստատումը կախված են ընդամենը մեկ հարցի՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումից, որին մանրամասն կանդրադառնամ քիչ հետո: Չպետք է անկարեւոր համարել այն իրողությունը, որ հակառակ այդ հարցում Ադրբեջանի հանդեպ Թուրքիայի ցուցաբերած անվերապահ քաղաքական աջակցությանը, վերջինս, շրջափակումից բացի, Հայաստանի դեմ որեւէ այլ թշնամական գործողություն չի ձեռնարկել եւ ոչնչով չի կարողացել խանգարել Ղարաբաղի տարածքային ընդարձակմանը: Ավելին, գուցե պարադոքսալ հնչի, ցուցադրական աջակցությամբ մեծ հույսեր ներշնչելով ու դրանով անզիջողականության մղելով Ադրբեջանին, Թուրքիան որոշ առումով նույնիսկ նպաստել է արցախյան բանակի արձանագրած հաջողություններին: Եթե, հակամարտության հարցում կողմերից մեկին աջակցելու փոխարեն, նա չեզոքություն պահպաներ ու դրանով Ադրբեջանին անզիջողա-

56907

կանության չդրդեր, ապա Քելբաջարից հետո վերջինս չէր կորցնի իր տարածքի հավելյալ հինգ շրջանները: Թուրքիայի ապակառուցողական միջամտությունն, այսպիսով, ոչ թե թուլացրել, այլ ավելի եւս սրել է հակամարտության շուրջ ստեղծված լարվածությունը:

Ինչեւիցե, վերոշարադրյալից ակնհայտորեն հետեւում է, որ Հայաստանը զերծ է իր գոյությանն սպառնացող գրեթե բոլոր այն արտաքին վտանգներից, որոնք անկախության ավելի քան քառասուն տարիներին սպառնացել են Իսրայելին եւ այսօր էլ դեռ շարունակում են սպառնալիք մնալ: Հետեւաբար, մեր երկիրը, անշուշտ ուշադրության կենտրոնում պահելով ազգային բանակի հզորացման անհրաժեշտությունը, ամենեւին պարտադրված չէ հետեւելու «ազգ-բանակի» կառուցման իսրայելյան օրինակին: Արաբական եւ իսլամական աշխարհի հետ Իսրայելի ունեցած խնդիրների համեմատությամբ, Հայաստանի ու Ղարաբաղի խնդիրները շատ ավելի լոկալ ու լուծելի են: Այդ պատճառով է, մասնավորապես, որ միջազգային հանրությունը դրանք առայժմ առաջնահերթություն չի դիտում: Այս ամենից բացի, Իսրայելյան փորձի ընդօրինակումը խոցելի է նաեւ մի այլ՝ մեթոդաբանական առումով: Ամենեւին պարտադիր չէ, որ որեւէ երկրում կիրառված արդյունավետ համակարգը կիրառելի լինի նաեւ ուրիշ երկրներում: Չինական տնտեսական բարեփոխումների հրաշքն, օրինակ, կարող էր տեղի ունենալ միայն Չինաստանում:

Մի խոսքով, մեր պարագայում «ազգ-բանակի» կառուցման ծրագիրը ձախորդ, չմտածված, վտանգավոր ծրագիր է, որի միակ արդյունքը լինելու է արտագաղթի խթանումը եւ Հայաստանի ու Ղարաբաղի վերջնական հայաթափումը: Տպավորություն է ստեղծվում, որ վարչախումբը մտադիր է «ազգ-բանակ» ծրագիրն իրականացնել նրա բաղադրիչներից մեկի՝ ազգի վերացման գնով: Այսինքն՝ որոշ ժամանակ անց

մենք գուցե հզոր բանակ ունենանք, բայց հարց է՝ ազգ մնացած կլինի, թե՞ ոչ:

* * *

Բնականաբար հարց է առաջանում. եթե, ինչպես տեսանք, Հայաստանն իր անվտանգ գոյությունը պահպանելու համար պարտադրված չէ դիմելու «ազգ-բանակի» ստեղծման ծայրահեղ քայլին, ապա այդ խնդիրն իր առջեւ դնելով, ի՞նչ նպատակ է հետապնդում մեր երկրի իշխանությունը: Կարելի է, իհարկե, մտածել, եւ այդպես մտածողներ կան, որ «ազգ-բանակ» գաղափարի առաջքաշումը իշխող կուսակցության հերթական հայրենասիրախաղերից կամ նախընտրական փուչ կարգախոսներից մեկն է՝ «ազգովի դառնանք ֆիդայի», «համաշխարհային ազգ», «ազգ-կազմակերպություն», «ծովից-ծով Հայաստան», «Քուռ-Արաքսյան հանրապետություն», «ոչ մի թիզ հող», «համահայկական բանկ», «Գյումրին՝ տեխնոպարկ», «Դիլիջանը՝ ֆինանսական կենտրոն», «Ստամբուլը՝ արյան ծով» հեքիաթների շարքից: Եթե այդպես է, ուրեմն «ազգ-բանակի» գաղափարն այնքան էլ վտանգավոր չէ, որովհետեւ նախորդ փուչիկների պես շուտով կպայթի:

Իսկ եթե վարչախմբի մտադրությունն այս անգամ լուրջ է, ապա անհրաժեշտ է հարցին անդրադառնալ նույնքան լրջորեն: Շատ խելք պետք չէ հասկանալու համար, որ այդ գաղափարը ստատուս-քվոյի պահպանման միեւնույն ռազմավարությունն է՝ մատուցված ուրիշ փաթեթավորումով: Այսինքն, մեր իշխանությանը հոգեհարազատ մարկետինգի տրամաբանությամբ՝ իր սնանկությունն ապացուցած, բարոյապես մաշված եւ սպառողին ձանձրացրած բրենդը փոխարինվել է մի այլ, ավելի գրավիչ ու բարեհունչ բրենդով: Այլ կերպ ասած, դաս չքաղելով անցած 18 տարիների դառը փորձից, վարչախումբը որոշել է շարունակել Ադրբեջանի ու

Թուրքիայի հետ հավերժ առճակատման տխրահռչակ քաղաքականությունը, որն այս կարճ ժամանակամիջոցում արդեն իսկ տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական ու բարոյահոգեբանական բազում ավերներ է գործել Հայաստանում եւ Ղարաբաղում: Դա նշանակում է առնվազն եւս 18 տարի ենթարկվել այդ ավերներին, մինչեւ Հայաստանից ու Ղարաբաղից բան չմնա, եւ խնդիրն ինքնըստինքյան կորցնի իր ակտուալությունը:

Բազմիցս է ասվել, որ Հայաստանի ու Ղարաբաղի անվտանգության, տնտեսական զարգացման եւ ժողովրդագրական վիճակի բարելավման գլխավոր երաշխիքը Ղարաբաղյան հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն է: Պարզվում է, սակայն, որ այս տարրական ճշմարտությունն ըմբռնելու համար 18 տարին էլ չի բավականացրել մեր իշխանություններին: Իրականում խնդիրը մեկն է՝ Ղարաբաղի հարցի լուծումը, որից հետո հայ-թուրքական հարաբերությունները կկարգավորվեն ինքնաբերաբար: Իսկ Ղարաբաղի հարցի լուծման այլ տարբերակ, քան փուլայինը, գոյություն չունի: Այսօր բանակցությունների սեղանին, ըստ էության դրված է կարգավորման փոխզիջումային նույն առաջարկը, ինչ 1997 թվականին, այն է՝ որոշ տարածքների զիջման դիմաց Ղարաբաղին միջազգայնորեն ճանաչված միջանկյալ կարգավիճակ շնորհելու, իսկ վերջնական կարգավիճակի հարցը ապագային թողնելու տարբերակը՝ երաշխավորված ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում խաղաղապահ ուժերի տեղակայմամբ:

Արդի աշխարհում նվաճողի միջնադարյան իրավունքն ու ջունգլիների օրենքն այլեւս չեն գործում, եւ հակամարտությունների կարգավորման այլ տարբերակ, քան փոխզիջումը, գոյություն չունի: Բանկոստոմանյան կամ ոչմիթիզական մտածողություն ունեցող մեր անզիջողականների կողմից շատ սիրված Իսրայելի օրինակը նույնպես դա է ապացուցում: Քեմփ-Դեվիդյան հաշտությունը կայացնելու համար վերջինս Եգիպտոսին վերադարձրեց շուրջ 60 հազար քառակուսի կիլոմետր զբաղեցնող Սինայի թերակղզին, իսկ Պաղեստինի Ազատագրության կազմակերպության կողմից իր պետությունը ճանաչելու դիմաց լիակատար ինքնավարություն շնորհեց արաբական Պաղեստինին, պատրաստ լինելով, որոշ խնդիրների լուծումից հետո, ճանաչել նաեւ նրա անկախությունը: Դրանք դժվարին, ցավոտ փոխզիջումներ էին, հանուն որոնց կայացման Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթը եւ Իսրայելի վարչապետ Իցխակ Ռաբինը նույնիսկ կյանքով հատուցեցին: Այնպես որ, եթե անհրաժեշտություն կա անպայման օրինակ վերցնելու Իսրայելից, ապա պետք է վերցնել ոչ թե «ազգ-բանակի», այլ «խաղաղություն այժմ (Peace now)» շարժման օրինակը: Հակամարտությունների փոխզիջումային կարգավորման կանոնը «թույլատրված է» խախտել միայն գերտերություններին: Այդ բանը չգիտակցող Սադդամ Հուսեյնը, զավթելով Քուվեյթը, կործանեց թե՛ իրեն, թե՛ իր երկիրը:

«Փոխզիջման այլընտրանքը պատերազմն է» պնդումը, ապացուցված պատմական անթիվ օրինակներով, վիճարկելի չէ: Կարիք չկա նաեւ բացատրելու, թե ինչպիսի ողբերգական հետեւանքներ են ունենում պատերազմները: Ոչ իսկ բուն պատերազմը, այլեւ նրա սպառնալիքն անգամ հղի է այդպիսի հետեւանքներով, որոնցից ամենացցունը զանգվածային արտագաղթն է: Հայաստանը բնակչությունից դատարկվում է ոչ այնքան սոցիալական ծանր պայմանների, աղքատության, արդարության բացակայության եւ կոռուպցիայի, որքան պատերազմի վերսկսման տեւական վտանգի պատճառով: Սա միայն մեզ հատուկ երեւույթ չէ, եւ այդ առթիվ ամենեւին չպետք է բարդույթավորվել: Մեր աչքի առջեւ, վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում, պատերազմի կամ դրա սպառնալիքի պատճառով միլիոնա-

վոր մարդիկ են արտագաղթել նաեւ Վրաստանից, Ադրբեջանից, Իրաքից, Լիբանանից, Սիրիայից, Աֆղանստանից, Սուդանից, Ուկրաինայից եւ մի շարք այլ երկրներից:

* * *

Ղարաբաղյան հակամարտության այն հանգուցալուծմանը, որին Հայաստանը առավելագույն ջանքերի գնով կարող է հասնել ներկայումս, շատ ավելի շահեկան պայմաններով մենք կարող էինք հասնել դեռեւս 1998 թվականին: Եթե դա տեղի ունեցած լիներ, ապա ոչ միայն կխուսափեինք անցած տասնութ տարիների անտեղի տառապանքներից ու կորուստներից, այլեւ այսօր կունենայինք բոլորովին մի այլ՝ ծաղկուն, մարդաշատ, զարգացող երկիր եւ ապահով Ղարաբաղ: Ցավում եմ, որ այս պարզ ճշմարտությունները ժամանակին չհասկացվեցին իմ որոշ գործընկերների կողմից, եւ մենք կորցրեցինք հարցի լուծման հարմարագույն պահը: Հուսով եմ, որ այս պնդումը կընկալեք ոչ թե որպես ոմանց ուղղված կշտամբանք, այլ որպես զգուշացում առ այն, որ եթե նորից ժամանակ կորցնենք, հետագայում ստիպված ենք լինելու հարցը լուծել ավելի վատ պայմաններով ու շատ ավելի թույլ վիճակում: 1998 թվականի իշխանափոխության կործանարար հետեւանքների պատճառը պետք է փնտրել ոչ թե գործող անձանց փոփոխության, այլ քաղաքականության շարունակականության խաթարման մեջ:

Անցյալը մի կողմ դրած, ակնհայտ է, որ այսօր մենք կրկին կանգնած ենք Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հերթական պահը բաց չթողնելու հրամայականի առջեւ, ինչի վկայությունն են, մասնավորապես, վերջին շրջանում այդ ուղղությամբ Ռուսաստանի գործադրած լուրջ ջանքերը: Մի առիթով ես ասել եմ, որ Ղարաբաղի հարցի լուծման բանալին գտնվում է Ռուսաստանի ձեռքում, եւ նրա

այդ ջանքերն, արդ, գալիս են ապացուցելու տվյալ պնդման ճշմարտացիությունը: Ընդ որում, Արեւմուտքը եւս, որի առաջնահերթությունների շարքում, ինչպես նշվեց, Ղարաբաղյան կարգավորումը տեղ չի գրավում, վստահաբար, ոչ միայն գիտակցում, այլեւ գնահատում է Ռուսաստանի առանձնահատուկ դերակատարությունն այդ հարցում:

Հայ Ազգային Կոնգրեսը, իր նախորդի՝ Հայոց Համազգային Շարժման պես, Հայաստանի միակ կուսակցությունն է, որը ոչ միայն երբեք չի թաքցրել, այլեւ բազմիցս հրապարակավ հայտարարել է փոխզիջման եւ խաղաղության կողմնակցի իր դավանանքը: Հետեւաբար, ոչ միայն սկզբունքի տեսակետից, այլեւ իրավիճակի թելադրանքով Կոնգրեսն առաջիկա խորհրդարանական ընտրություններին պետք է մասնակցի սպառազինությունների մրցավազքի դադարեցման, նոր պատերազմի վտանգի բացառման, Ղարաբաղի հարցի լուծման, Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման կառուցողական ծրագրով, որը բխում է ոչ թե մեր կուսակցության, այլ բացառապես Հայաստանի ու Ղարաբաղի ժողովրդի կենսական շահերից: Այդ ծրագիրը, բնականաբար, հնարավոր է իրականացնել միայն ընտրություններում Կոնգրեսի հաղթանակի կամ Ազգային Ժողովում պատկառելի ներկայություն ունենալու պարագայում:

Սակայն, քանի որ ընտրությունները դեռ հեռու են ու դրանից հետո էլ, մինչեւ 2018թ. ապրիլը, Հայաստանում պահպանվելու է նախագահական համակարգը, անհրաժեշտ է հաշվի նստել այն հանգամանքի հետ, որ Ղարաբաղի հարցի լուծման պատասխանատվությունը եւս մեկուկես տարի դրված է լինելու Սերժ Սարգսյանի վարչակազմի եւ նրա հենարանը հանդիսացող կուսակցությունների վրա: Մյուս քաղաքական ուժերը, այդ թվում Հայ Ազգային Կոնգրեսը, առայժմ, կարծիք արտահայտելուց բացի, գործընթացի վրա ազդեցության որեւէ այլ լծակ չունեն: Դա չի նշանակում,

անշուշտ, որ նրանք, եթե ոչ իրավական, ապա առնվազն բարոյական պատասխանատվություն չպետք է ստանձնեն եւ, ձեռքերը լվանալով, մի կողմ քաշվեն: Մի այնպիսի համազգային խնդրի լուծման հարցում, ինչպիսին Ղարաբաղյան հակամարտությունն է, խաղաղության եւ հաշտության կողմնակից բոլոր կուսակցությունները, քաղաքացիական կազմակերպությունները եւ մտավորական խավերը պարտավոր են զորավիգ կանգնել օրվա իշխանություններին, անկախ նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Արտաքին սպառնալիքի կամ ներքին կայունության խախտման վտանգի պարագայում մենք միշտ առաջնորդվել ենք այս սկզբունքով, ինչի վկայությունն է, մասնավորապես, հոկտեմբերի 27-ին, ապրիլյան պատերազմի ժամանակ եւ Սասնա ծռերի հետ կապված դեպքերի օրերին մեր դրսեւորած դիրքորոշումը:

Մյուս քաղաքական ուժերը կա՛մ անզիջողականներ ու ոչմիթիզիոողականներ են, կա՛մ էլ, այդպիսին չլինելով, ազգադավ կոչվելու վախից, չեն համարձակվում Ղարաբաղի հարցում դիրքորոշում արտահայտել: Հակառակ այն հանգամանքին, որ ոչմիթիզիոողականներից շատերը հողերի ձեռքբերման հետ որեւէ կապ չեն ունեցել, իսկ որոշ մասը, Վարուժան Ավետիսյանի դիպուկ արտահայտությամբ, պարզապես զինվորի ու ազատամարտիկի արյան վրա ձեռք տաքացնողներ են, նրանց գոյությունն ամենեւին արտառոց չպետք է համարել: Այդպիսի ծայրահեղական ուժեր կան անգամ զարգացած ժողովրդավարական երկրներում, այդ թվում, սույն ելույթում բազմիցս հիշատակված Իսրայելում: Արտառոցն ու ապշեցուցիչը Հանրապետական կուսակցության եւ կոալիցիոն կառավարության ներկայացուցիչների պահվածքն է: Այդ կուսակցության ոչ մի անդամ եւ պետական ոչ մի պաշտոնյա, լողզված ու կցկտուր խոսքերից բացի, երբեւէ փոխզիջման վերաբերյալ հրապարակային հստակ հայտարարությամբ հանդես չեն եկել: Հասարակությանը խաղաղության նախապատրաստելու եւ դրա ընդդիմախոսներին հակադարձելու գործում նրանք փաստորեն լքել, մենակ են թողել իրենց նախագահին: Այնինչ դա պետք է լիներ ոչ թե Հայ Ազգային Կոնգրեսի, այլ առաջին հերթին, հենց իրենց գործը: Պահն է, վերջապես, գիտակցելու, որ Ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացում հաջողության հասնելու համար Սերժ Սարգսյանին անհրաժեշտ է հանդես գալ ժողովրդի մեծամասնության, քաղաքական ուժերի եւ հասարակական կազմակերպությունների աջակցությունը վայելող առաջնորդի, եւ ոչ թե սեփական երկրի ներսում լուրջ խնդիրներ ունեցող թույլ ղեկավարի հանգամանքով: Իսկ դրա համար ոչ թե պետք է էժանագին «հայրենասիրական» հոխորտանքներով թեւաթափ անել նրան, այլ, ընդհակառակը, խրախուսել կատարելու Ղարաբաղյան կարգավորման վճռական քայլը: Այլապես, բանակցությունների ընթացքում նրա փաստարկների հետ ոչ ոք հաշվի չի նստի:

Ժողովուրդները, որպես կանոն, երախտագիտություն են հայտնում այն առաջնորդներին, ովքեր իրենց ոչ թե նույնիսկ հաղթական պատերազմ, այլ խաղաղություն են պարգեւում: Այս իրողությունը հատուկ է ոչ միայն ժամանակակից աշխարհին, այլեւ խորապես գիտակցվել է անգամ միջնադարում: Որքան էլ միջնադարյան հեղինակները գովերգեին իրենց թագավորների կամ սուլթանների զինական առաքինություններն ու քաջագործությունները, նրանց կողմից, այդուհանդերձ, ավելի բարձր էին դասվում այն պետական այրերը, որոնք խաղաղություն եւ բարօրություն էին պարգեւում իրենց ժողովուրդներին, թեկուզ դրանք նվաճված լինեին փոխզիջումների գնով: Հայ իրականության մեջ այդ գաղափարը հստակորեն ձեւակերպել են մանավանդ XI–XIII դարերի հռչակավոր մատենագիրներ Արիստակես Լաստիվերտցին եւ Հովհաննես Երզնկացին: «Թագաւորաց օրէն է

աշխարհի խաղաղութիւն եւ շինութիւն հոգալ»,– գրում է Լաստիվերտցին: Ի դեպ, միջին պարսկերենից փոխառված հայերեն «շէն» եւ ասորերեն «šaynā» արմատներից ածանցյալ «շինութիւն» եւ «mšaynūta» բառերն ունեն երկու իմաստ՝ «խաղաղություն» եւ «բարօրություն», ինչը նշանակում է, որ ժողովրդական լեզվամտածողության մեջ այդ երկու գաղափարները բացարձակապես նույնացվել են, արտացոլելով այն ըմբռնումը, որ եթե չկա խաղաղություն, բարօրություն լինել չի կարող (մանրամասն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. Բ, Երեւան, 2007, էջ 28–29): Սերժ Սարգսյանին, արդ, մնում է հետեւել մեր նախահայրերի իմաստությանը եւ անսալ ռացիոնալ քաղաքականության թելադրանքին, ինչը չի կարող ըստ արժանվույն չգնահատվել ժողովրդի կողմից:

* * *

Ելույթիս կապակցությամբ հնարավոր, ավելի ճիշտ, անխուսափելի չարախոսությունները կանխելու նպատակով, հարկադրված եմ նաեւ կատարել հետեւյալ երկու զգուշացումները.

Առաջին. Արտաքին սպառնալիքների դիմակայման եւ ներքին կայունության ապահովման հարցերում իշխանություններին զորավիգ կանգնելու մեր սկզբունքային դիրքորոշումն ամենեւին վարչախմբի հետ համագործակցություն չի նշանակում: Մենք եղել ենք վերջինիս ամենախիստ, սկզբունքային ու հետեւողական քննադատն ու այսուհետեւ էլ չենք դադարելու այդպիսին լինել, կտրականապես բացառելով մաս կազմել հայ ժողովրդի գլխին անհամար աղետներ բերած Հանրապետական կուսակցության ձեւավորած որեւէ կոալիցիայի: Գաղափարական, քաղաքական եւ բարոյական սկզբունքներով մենք միմյանցից բոլորովին տարբեր, հակոտնյա կուսակցություններ ենք, որոնց հարաբերությունները իշխանություն-ընդդիմություն ձեւաչափից այն կողմ չեն կարող անցնել:

Եւ երկրորդ. Ադրբեջանի ղեկավարությունը չարաչար սխալված կլինի, եթե այս ելույթի հաշտարար ոգին եւ հայ ժողովրդի խաղաղության ձգտումը թուլության նշան համարի ու ավելի եւս կոշտացնի իր դիրքորոշումը Ղարաբաղի հարցում: Ապրիլյան պատերազմը, կարծում եմ, նրան ապացուցած պետք է լինի վտանգի պահին հայ ժողովրդի միավորվելու ու ցանկացած ոտնձգության հուժկու հակահարված հասցնելու կարողությունը: Սեփական նախաձեռնությամբ սանձազերծված հաջորդ պատերազմում, երբ էլ այն պատահի, Ադրբեջանը, հաստատաբար, դառը պարտություն կկրի ու եւս մի քանի շրջան կկորցնի: Իսկ թե դրանից հետո ինչ տեղի կունենա, միայն Աստծուն է հայտնի: Հակառակ իր ռազմաշունչ հռետորաբանությանը, Իլհամ Ալիեւին ես համարում եմ ռացիոնալ մտածող պետական գործիչ, որն ընդունակ է համաչափ քայլ կատարել խաղաղության հաստատման նաեւ սեփական ժողովրդին խիստ անհրաժեշտ ուղղությամբ, ինչպես ժամանակին իմ «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածին ընդարձակ ելույթով ողջախոհաբար արձագանքեց իր հայրը՝ հանգուցյալ Հեյդար Ալիեւը:

Պատկերացնում եմ, թե այս ելույթից հետո ինչպիսի վայնասուն է բարձրանալու Հայաստանի քաղաքական ու տեղեկատվական դաշտում: Մեզ բախտ է վիճակվելու կրկին ականատես լինել տգիտության, կարճատեսության, պոռոտախոսության շքեղ մի տոնահանդեսի: Մենք արժանանալու ենք բազմազան մաշված պիտակների, եւ արդեն որերորդ անգամ մեզ գամելու են անարգանքի սյունին, ի հաստատումն հայ քաղաքական մտքի օրիգինալությունը բնորոշող հետեւյալ պարադոքսալ սիլլոգիզմի.

a. Զիջում ես մասը, մյուս մասը կարողանում ես պահպանել.

b. Ոչինչ չես զիջում, կորցնում ես ամեն ինչ.

c. Մասը պահողները հռչակվում են դավաճաններ. Ամեն ինչ կորցնողները կոչվում են հայրենասերներ:

Ինչո՞ւ ենք, ուրեմն, մեր անցավ գլուխը փորձանքի տակ դնում: — Որովհետեւ Հայաստանում ճշմարտության երեսին ուղիղ նայող ուրիշ ուժ չկա: Եթե մենք էլ մյուսների պես լռենք, ողջախոհության ճրագը մեր երկրում վերջնականապես կմարի: Ուստի, անկախ այն բանից, թե մեզ ինչ պիտակներ կփակցնեն, ես Կոնգրեսին առաջարկում եմ խիզախաբար ընտրությունների գնալ «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» նշանաբանով: Դա չի կարող հասկացողություն չգտնել ժողովրդի ճնշող մեծամասնության մոտ, որովհետեւ Հայաստանի ու Ղարաբաղի փրկության, ապահովության ու զարգացման այլ ճանապարհ գոյություն չունի: Հեղինակավոր քաղաքագետների ու տնտեսագետների, այդ թվում, մեր հայրենակից Տարոն Աճեմյանի կողմից Հայաստանն արդեն իսկ դասվում է ձախողված պետությունների, այսինքն՝ Աֆղանստանի, Սոմալիի, Լիբիայի, Եմենի, Հարավային Սուդանի, Իրաքի եւ նմանատիպ այլ երկրների շարքին: «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» նշանաբանի իրագործումը պատեհություն է ընձեռում կարճ ժամանակի ընթացքում դուրս գալու այդ դժբախտ ընկերակցությունից: Հետեւաբար, Հայաստանի ու Ղարաբաղի հանրապետություններն իրավունք չունեն բաց թողնելու այդ պատեհությունը: Իսկ ինչ վերաբերում է Հայ Ազգային Կոնգրեսի տվյալ պահի մարտավարությանը, ապա, իմ կարծիքով, ցանկալի կլիներ, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններին մենք մասնակցեինք այս նշանաբանի կամ քաղաքական պլատֆորմի շուրջ ձեւավորված դաշինքով: Այդպիսի դաշինք կազմելու ցանկություն հայտնող կուսակցությունների առջեւ մեր դռները պետք է բաց լինեն:

Ավարտելով խոսքս, Ղարաբաղյան կարգավորման հարցում Կոնգրեսի դիրքորոշումն ավելի հստակեցնելու համար, չխուսափելով որոշ կրկնություններից, հարկ եմ համարում շեշտել, որ այդ դիրքորոշումը հիմնված է հետեւյալ առարկայական (օբյեկտիվ) ելակետերի վրա.

ա. Առանց այդ խնդրի լուծման Հայաստանը եւ Ղարաբաղը զրկված են ապահովության, զարգացման ու բարգավաճման որեւէ հեռանկարից. տասնութ տարին քիչ ժամանակ չէր, այդ բանն ըմբռնելու համար:

բ. Այլ լուծում, քան այն, ինչ դրված է բանակցությունների սեղանին, գոյություն չունի: Պահը բաց թողնելու դեպքում հաջորդ լուծումը մեզ համար ավելի վատն է լինելու:

գ. Կարգավորման արդյունքում կողմերն իրենց հաղթող կամ պարտվող չպետք է զգան, այլապես երկարաժամկետ կտրվածքով նրանց հարաբերությունները հղի կլինեն հակամարտության վերականգնման մշտական վտանգով:

դ. Հայ Ազգային Կոնգրեսը, ինչպես արդեն նշվեց, կարծիք արտահայտելուց բացի, կարգավորման գործընթացի վրա ազդեցության այլ լծակ չունի:

ե. Հարցի լուծման պատասխանատվությունն ամբողջապես ընկած է իշխող վարչախմբի եւ նրա հենարանը հանդիսացող քաղաքական ուժերի վրա: Ուզո՞ւմ են ականջալուր լինել մեր կարծիքին՝ շատ լավ, չե՞ն ուզում՝ մեղքը իրենց վիզը:

զ. Եթե մեր իշխանությունն ի զորու լինի հասնելու ավելի շահեկան, հաղթողական լուծման, մենք միայն կողջունենք դա եւ ներողություն կխնդրենք նրանցից:

է. Մենք հավասարապես ցավում ենք հակամարտության պատճառով ոչ միայն հայերի, այլեւ ադրբեջանցիների կրած անհամար տառապանքների համար եւ անկեղծորեն

հավատում երկու ժողովուրդների խաղաղ համակեցությանն ու բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը:

Ելույթս գուցե դառը ստացվեց, բայց իմ նպատակը ոչ թե մարդկանց վիատեցնելն էր, այլ, ընդհակառակը, ազգին ներկայիս հեղձուկ իրավիճակից հուսադրիչ ու արժանապատիվ ելք ցույց տալը՝ ազգ, որի ուրախության ու հպարտության միակ առարկան այսօր Հենրիկ Մխիթարյանն է:

ՊԱՏԵՐԱԶՄ, ԹԵ՞ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ. ԼՐՋԱՆԱԼՈՒ ՊԱՀԸ

(1 նոյեմբերի, 1997թ.)[1]

Սեպտեմբերի 26-ի իմ մամլո ասուլիսը, ավելի ճիշտ՝ ասուլիսի Ղարաբաղին նվիրված հատվածը մամուլում եւ ընդդիմության կազմակերպած հավաքներում բուռն կրքերի բորբոքման առիթ տվեց: Ինձ համար դա անակնկալ չէր, եւ ինչ-որ չափով ես նույնիսկ ավելի խիստ հակազդեցություն էի սպասում:

Անակնկալը բանավեճի որակն էր, իսկ պարզ ասած՝ բանավեճի իսպառ բացակայությունը: Խոստովանում եմ, ես չհասա իմ նպատակին, այն է՝ մամուլում եւ հրապարակային ժողովներում լուրջ բանավեճ ծավալել հայ ժողովրդի առջեւ ծառացած ամենակնճռոտ խնդրի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավոր ուղիների շուրջ:

Ընդդիմության արձագանքը դուրս չեկավ հայհոյանքի, վերագրումների, պիտակավորումների ու խեղաթյուրումների շրջանակից: Չարվեց ոչ մի բանական առաջարկ, չներկայացվեց ոչ մի այլընտրանքային ծրագիր, չբերվեց ոչ մի հիմնավոր հակափաստարկ: Սրանից կարելի է անել երկու հե-

[1] ***Լեւոն Տեր-Պետրոսյան***, *Ընտրանի, Երեւան, 2005, էջ 625–639: Հրապարակվել է նաեւ հանրապետության գրեթե բոլոր թերթերում, նաեւ արտասահմանում, հայերեն եւ այլ լեզուներով: Բազմաթիվ հրապարակումներ է ունեցել նաեւ հետագա տարիներին:*

տեւություն. կա՛մ ընդդիմությունը չունի ղարաբաղյան կարգավորման որեւէ ծրագիր, կա՛մ եթե ունի, բայց թաքցնում է, այնքան էլ ազգանպաստ գործով չի զբաղված. ավելի խիստ որակումից ես զերծ եմ մնում:

Ի՞նչ հասկացավ ժողովուրդն ընդդիմության հանած աղմուկից. որ Արցախի համար մենք արյուն ենք թափել, որ գրավված տարածքները վերադարձնելով վտանգվում է Արցախի գոյությունը, որ հանուն Արցախի հայ ժողովուրդը նորից պատրաստ է արյուն թափելու, որ մենք թքած ունենք համաշխարհային կարծիքի վրա, որ մենք ծնկի կբերենք ե՛ւ Ադրբեջանը, ե՛ւ միջազգային հանրությունը, որ մենք «ազգովի կդառնանք ֆիդայի»:

Իսկ հետո՞: Ոչ ոք չփորձեց պատասխանել հետեւյալ պարզ հարցերին.

– այս ամենն անելուց հետո մենք կհասնե՞նք մեր բաղձալի նպատակին, թե ոչ.

– երբ մենք թքենք աշխարհի երեսին, նա մեզ ինչո՞վ կպատասխանի.

– թափվելու է Կինոյի տանը հավաքված 500 հոգու, թե՞ մեր ժողովրդի անմեղ արյունը:

Առնվազն վերջին հարցին կարելի է միանշանակ պատասխան տալ. հինգհարյուրի գլխից մի մազ անգամ չի պակասի, անկախ այն բանից, թե նրանք այսօր ինչպիսի զոհողությունների գնալու պատրաստակամություն են հայտնում: Երբ Արցախը վտանգի մեջ էր, երբ հակառակորդն ընդհուպ մոտեցել էր Գանձասարին, նրանցից ոչ ոք չարձագանքեց Վազգեն Սարգսյանի կոչին ու չմիացավ մահապարտների գնդին: Ուրիշի արյան գնով փառք որոնողներից ու հերոս ձեւացողներից մեր ժողովուրդը պետք է որ կուշտ լինի:

Ընդդիմության շփոթը, բացի քաղաքական նկատառումներից, գուցեեւ մասամբ բացատրվում է անտեղյակությամբ, որ բնական է, քանի որ Ղարաբաղում եւ Հայաստանում հակամարտության կարգավորման գործընթացին [illegible] տական մակարդակով տիրապետում են ընդամենը [illegible] գի՝ Արկադի Ղուկասյանը, Ռոբերտ Քոչարյանը, Ալեքսանդր Արզումանյանը, Վարդան Օսկանյանը, Ժիրայր Լիպարիտյանը եւ ես:

Բանավեճի առարկան

Ինչեւէ, բանավեճ չստացվեց, բայց դա ոչ ինձ, ոչ էլ մեր հասարակությանը չպետք է հիասթափեցնի: Միեւնույն է, ազգի ճակատագիրը տնօրինելու հավակնող ցանկացած քաղաքական գործիչ կամ մտավորական վաղ թե ուշ ստիպված է լինելու հրաժարվել հայհոյախոսությունից (խոսքս հոգեկան հիվանդների մասին չէ) եւ ժողովրդի առջեւ հանդես գալ կոնկրետ հաշվարկված ծրագրով:

Չսպասելով դրան, ես այսօր էլ պատրաստ եմ լրջորեն քննարկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ցանկացած բանական առաջարկ, համաձայն եմ ցանկացած մակարդակի հրապարակային բանավեճի:

Սակայն բանավեճը կարող է առարկայական լինել միայն նախապես կողմնորոշվելով մի քանի ելակետային դրույթների շուրջ, այն է.

– Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է լուծվի պատերազմի, թե՞ խաղաղ բանակցությունների միջոցով.

– հնարավո՞ր է, արդյոք, հավերժորեն կամ թեկուզ երկար ժամանակով պահպանել ստատուս-քվոն եւ Ղարաբաղի խնդրի չկարգավորված վիճակը.

– Ղարաբաղին եւ Հայաստանին ձեռնտու է հարցի կարգավորված, թե՞ չկարգավորված վիճակը.

– հարցը պետք է լուծվի փոխզիջումով, թե՞ կողմերից մեկի պարտությամբ, եւ այդ դեպքում ո՞վ է լինելու պարտվող կողմը:

Այս դրույթների շուրջ ես հստակ կերպով արտահայտվել եմ բազմիցս եւ այսօր էլ պնդում եմ, որ՝

– պատերազմը պետք է բացառվի, ուստիեւ Ղարաբաղի հարցը պետք է լուծվի միայնումիայն խաղաղ բանակցությունների միջոցով.

– ստատուս-քվոն երկար ժամանակով պահպանել հնարավոր չէ, որովհետեւ դա թույլ չեն տա ո՛չ միջազգային հանրությունը, ո՛չ էլ Հայաստանի տնտեսական կարողությունները.

– Ղարաբաղին եւ Հայաստանին ձեռնտու չէ հարցի չկարգավորված վիճակը, որովհետեւ դա զգալիորեն խոչընդոտում է Հայաստանի, հետեւաբար նաեւ Ղարաբաղի տնտեսական զարգացմանը, բարդություններ ստեղծում միջազգային հանրության եւ մանավանդ հարեւան երկրների հետ հարաբերություններում, որոնք կարող են ճակատագրական նշանակություն ունենալ.

– Ղարաբաղի հարցի լուծման միակ տարբերակը փոխզիջումն է, որը նշանակում է ոչ թե մի կողմի հաղթանակ եւ մյուսի պարտություն, այլ հակամարտության հագեցման վիճակում ձեռքբերված հնարավոր համաձայնություն:

Թող չփորձեն ժողովրդին մոլորեցնել, ասելով, թե փոխզիջումն այլընտրանք ունի. փոխզիջման այլընտրանքը պատերազմն է:

Փոխզիջման մերժումը եւ մաքսիմալիզմը (առավելագույնը եւ ոչ թե հնարավորը ձեռքբերելու ձգտումը) Ղարաբաղի իսպառ կործանման եւ Հայաստանի վիճակի վատթարացման ամենակարճ ճանապարհն է:

Խոսքը չի վերաբերում Ղարաբաղը տալուն կամ չտալուն: Խոսքը վերաբերում է Ղարաբաղը հայկական պահելուն. 3000 տարի այն բնակեցված է եղել հայերով եւ 3000 տարի հետո էլ պետք է բնակեցված լինի հայերով:

Իմ ընտրած ուղին ապահովելու է այդ հեռանկարի հնարավորություններ պահպանելու հասնել մեր բարձրագույն նպատակին: Արկածախնդիրների ուղին տանելու է դեպի անխուսափելի պարտություն: Մենք մի անգամ արդեն, «Ստամբուլը արյան ծով դարձնելով», կորցրել ենք Արեւմտահայաստանը, իսկ մի այլ անգամ՝ պահանջելով Սեւրի դաշնագրով գծված տարածքները, կորցրել ենք Արեւելահայաստանի կեսը:

Փոխզիջման էությունից բացի կարեւոր է նաեւ փոխզիջման պահը: Ակնհայտ է, որ փոխզիջման դեպքում հասանելի առավելագույնը ձեռքբերելու հնարավորություն ունի ուժեղ կողմը: Հայաստանն ու Ղարաբաղն այսօր ուժեղ են քան երբեւէ, բայց հակամարտության չկարգավորման դեպքում մեկ-երկու տարի հետո անհամեմատ թուլանալու են: Այն, ինչ մերժում ենք այսօր, ապագայում խնդրելու, բայց չենք ստանալու, ինչպես բազմիցս եղել է մեր պատմության մեջ:

Պետք է իրատես լինել եւ հասկանալ, որ միջազգային հանրությունը երկար չի հանդուրժելու Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրադրությունը, քանի որ այն սպառնում է տարածաշրջանային համագործակցությանն ու անվտանգությանը, ինչպես նաեւ Արեւմուտքի նավթային շահերին: Վաղ թե ուշ կողմերին պարտադրվելու է կարգավորման մի փոխզիջումային ծրագիր, որը լինելու է ոչ թե հարցի իրավական, այլ քաղաքական լուծում, թեեւ աշխարհի ուժեղները դա հրամցնելու են որպես միջազգային իրավունքի օրինակելի դրսեւորում: Ո՛չ Ադրբեջանը, ո՛չ էլ Ղարաբաղն ու Հայաստանը փոխզիջումից խուսափել չեն կարողանալու, ինչպես չկարողացան խուսափել բոսնիական եւ արաբա-իսրայելյան հակամարտության կողմերը:

Փոխզիջումը, սակայն, միայն պարտադրանք չպետք է դիտել. ընդհակառակը, հակամարտող կողմերն իրենք դեռ պետք է հսկայական ջանքեր գործադրեն նրա շուտափույթ

կայացման համար, որովհետեւ այլընտրանքն, ինչպես ասվեց, պատերազմն է ու ժողովուրդների նորանոր տառապանքները:

Փոխզիջումն ընտրություն չէ լավի ու վատի միջեւ, այլ վատի ու վատթարի միջեւ, այսինքն՝ փոխզիջումն ընդամենը վատթարից խուսափելու միջոց է, որից հակամարտող կողմերը հարկադրաբար օգտվում են, երբ հասել են վատթարի գիտակցմանը եւ ի վիճակի են դրսեւորել քաղաքական կամք ու անհրաժեշտ խիզախություն:

Փոխզիջման դիմելիս կողմերը սովորաբար առաջնորդվում են մի քանի նկատառումներով, այն է. ազատվել իրենց բնականոն կենսագործունեությունն ու զարգացումն արգելակող եւ լուրջ վտանգներով հղի հակամարտությունից. սառեցնել խնդիրը, հետաձգել այն՝ ժամանակ շահելու, ուժեր կուտակելու եւ ավելի բարենպաստ հանգամանքներում հօգուտ իրենց լուծելու նպատակով. խուսափել անկանխատեսելի բարդություններից՝ հույս փայփայելով, որ հետագայում ժողովուրդների հարաբերություններում նոր մտածողության արմատավորման եւ արժեքների վերագնահատման հետեւանքով խնդիրը կարող է կորցնել իր սրությունը, եւ սահմաններն, օրինակ, չունենան այն նշանակությունը, որ ունեն ներկայումս: Այդ մտածողությունն ու արժեքների վերագնահատումն այսօր տիրապետող են Եւրոպայում, վաղը կարող են տիրապետող դառնալ նաեւ Մերձավոր Արեւելքում, որի մասնավոր վկայությունն է, թերեւս, արաբա-իսրայելյան խաղաղության գործընթացը:

Փոխզիջումն ինչ-որ չափով բավարարելու է հակամարտության բոլոր կողմերին, բայց միաժամանակ ամբողջովին չի գոհացնելու ոչ մեկին: Նախագահ Ալիեւը դա ներկայացնելու է որպես Ադրբեջանի հաղթանակը, ես փորձելու եմ ներկայացնել որպես Հայաստանի հաղթանակը: Ադրբեջանական ընդդիմությունը համարելու է, որ Ալիեւը դավաճանեց ու ծախեց Ղարաբաղը: Հայաստանի ընդդիմությունը համարելու է, որ ես դավաճանեցի ու ծախեցի Ղարաբաղը:

Նման դեպքերում չպետք է բացառել, իհարկե, Ռաբին Պերեսի սինդրոմի ազդեցությունը: Բայց չի կարելի անտեսել նաեւ Նաթանյահուի սինդրոմը, որը անզիջող դիրքերից գալով իշխանության գլուխ, կարճ ժամանակ անց, թեեւ դժկամությամբ, ստիպված եղավ շարունակել Ռաբինի ու Պերեսի սկսած խաղաղության գործընթացը:

Որոշ թյուրիմացություններ

Ընդդիմության հետասուլիսյան քարոզարշավում շրջանառության մեջ են դրվել որոշ թյուրիմացություններ, որոնցից մի քանիսին հարկ եմ համարում թռուցիկ կերպով անդրադառնալ:

Առաջին թյուրիմացությունը, եթե կուզեք՝ վտանգավոր մոլորությունն այն է, թե Ղարաբաղի հակառակորդը Ադրբեջանն է, որին կարելի է հեշտությամբ ծնկի բերել: Իրականում, սակայն, Ղարաբաղի հակառակորդը միջազգային հանրությունն է, որին մենք, փաստորեն, ձեռնոց ենք նետել: Չհասկանալ այս պարզ իրողությունը, կնշանակի մեր ժողովրդին մատնել դաժան փորձությունների:

Երկրորդ թյուրիմացությունը այն անհիմն պնդումն է, թե Ղարաբաղը շահել է պատերազմը, հետեւաբար կարիք չունի որեւէ զիջման գնալու: Դժբախտաբար, Ղարաբաղը շահել է ոչ թե պատերազմը, այլ ճակատամարտը: Պատերազմը շահում են միայն այն ժամանակ, երբ հակառակորդը կապիտուլյացիայի է ենթարկվում: Պատերազմի ու ճակատամարտի շփոթությունը շատ շատերին է փորձանքի բերել:

Երրորդ թյուրիմացություն. մինչեւ հիմա մեզ ամեն ինչ հաջողվել է, ուստի այսուհետեւ եւս կհաջողվի: Այսինքն՝ մինչեւ հիմա մենք կարողացել ենք հաղթել Ադրբեջանին, այսու-

հետեւ էլ կհաղթենք, մինչեւ հիմա մենք դիմացել ենք արտաքին ճնշումներին, այսուհետեւ էլ կդիմանանք եւ այլն: Սա թերեւս թյուրիմացություններից ամենավտանգավորն է, որովհետեւ ապագա հաջողությունների գրավականը դիտում է ոչ թե ուժերի ապագա հարաբերակցությունը, այլ անցյալի հաջողությունները: Այսպես մտածողները լուրջ պրոբլեմ ունեն տրամաբանության տարրական օրենքների հետ: Եթե ապագա հաղթանակները պայմանավորված լինեին անցյալի հաջողություններով, ապա մեկ անգամ հաղթողն այլեւս երբեք չէր պարտվի, այսինքն Հռոմեական կայսրությունը երբեւէ չէր կործանվի:

Հաջորդ թյուրիմացությունը կամ ավելի ճիշտ՝ անհեթեթությունն այն է, թե Հայաստանի Նախագահը ծախում է Ղարաբաղը իր իշխանությունը պահելու համար: Դժվար է հավատալ, որ անգամ խելակորույսի մտքով կանցներ, թե Ղարաբաղը ծախելով, որեւէ մեկը Հայաստանում կարող է իշխանություն պահել:

Ի դեպ, իշխանությունը պահելու մարմաջի մասին. ի՞նչը պիտի ինձ ստիպեր ամեն գնով պահպանել իշխանությունը. բարի՞քը, փա՞ռքը, թե հերոսականացումը:

Նախագահության օրոք ոչ մի բարիք կամ սեփականություն չեմ ստացել (կարող եք ստուգել) եւ չեմ էլ ուզում ստանալ:

Անձնական փառքի կամ հերոսականացման ձգտելու պարագայում ես պարզապես չէի մասնակցի 1996 թ. ընտրություններին, սերունդների աչքում մնալով որպես անկախություն նվաճած, ղարաբաղյան հերոսամարտը շահած, հայկական տարածքներն ընդարձակած Նախագահ, անկախ այն բանից, թե որքան արդարացի է այդ ամենի ինձ վերագրումը: Ինչ փույթ, թե դրանից հետո ինչ կպատահեր եւ ում վրա կընկներ վիճակի վատթարացման պատասխանատվությունը: Միեւնույն է, իմ վարկանիշը դրանից չէր տուժի, այլեւ ընդհակառակը, թերեւս ավելի շահեր: Կրկնում եմ, անձնական տեսակետից ինձ համար ամենալավ լուծումը թերեւս այդ էր, բայց դա կլիներ ոչ այլ ինչ, եթե ոչ փոքրոգի դասալքություն, որին, դժբախտաբար թե բարեբախտաբար, սովոր չեմ: Ես վերընտրվել եմ իմ առջեւ կանգնած դժվարությունների եւ դրանց հաղթահարման գործում կրելիք պատասխանատվության սառը գիտակցությամբ, որի համար ամենեւին չեմ զղջում:

Մի՞թե ես չգիտեմ հերոս ձեւանալու, ազգային բոլոր իղձերի իրականացնողը ներկայանալու, ժողովրդին ամեն գնով դուր գալու էժան հնարքները: Մի՞թե ես չէի կարող գիշեր-ցերեկ հայհոյել թուրքերին, ՄԱԿ-ի առջեւ բարձրացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, չեղյալ հայտարարել Կարսի պայմանագիրը, Թուրքիայից պահանջել Սեւրի դաշնագրով գծված սահմանները, վերջնագիր ներկայացնել Ադրբեջանին, ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, հայտարարել, որ ոչ մի թիզ հող չենք զիջի եւ այլն:

Այդ բոլոր հնարքները ես վարպետորեն կարող էի օգտագործել, համենայն դեպս ոչ ավելի վատ, քան Կինոյի տանը հավաքվածներից որեւէ մեկը. ինչ է, կրթությո՞ւնս չի ներում, խե՞լքս չի կտրում: Ես հեշտությամբ կարող էի քաջի ու մեծ հայրենասերի համբավ ձեռք բերել, դառնալ ազգի կուռքը, Հայաստանի ու Սփյուռքի միասնության խորհրդանիշը:

Ի՞նչն է, ուրեմն, խանգարում անել այդ ամենը՝ քաջության պակա՞սը, աշխարհաքաղաքացիական (կոսմոպոլիտ) մտածողությո՞ւնը, ապազգային էությո՞ւնը, թե սխալ դաստիարակությո՞ւնը: Խանգարում է ընդամենը պարզ քաղաքական հաշվարկը եւ մեր ժողովրդին փորձանքներից հեռու պահելու գիտակցությունը: Այլ կերպ վարվելու դեպքում աղետներն ու արհավիրքներն անխուսափելի կլինեին, եւ այսօր ոչ միայն կորցրած կլինեինք Ղարաբաղը, այլեւ վտանգված կլիներ Հայաստանի գոյությունը: Լուսաբանությունների համար հեռու

չգնալով, հիշենք մեր հարեւանների բախտը. մեր աչքի առջեւ Գամսախուրդիան եւ Էլչիբեյը որդեգրեցին հերոսանալու քաղաքականությունը, դարձան ազգային կուռքեր, բայց անհամար աղետներ բերին իրենց ժողովուրդների գլխին:

Առասպելներ եւ հանելուկներ

Հայաստանի քաղաքական մտքի եւ հասարակական կարծիքի անդաստաններում դեգերում են նաեւ որոշ կայունացած պնդումներ, որոնք արդեն վերաբերում են առասպելի ու հանելուկի բնագավառին.

Առասպել առաջին. ***Հայաստանն իբր ճնշումներ է բանեցնում Լեռնային Ղարաբաղի իշխանությունների վրա:***

Այս պնդման առթիվ ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ. Հայաստանը միայն մեկ անգամ է ճնշում բանեցրել Ղարաբաղի վրա՝ 1993 թվականին նրան համոզելով մասնակցել Մինսկի խմբի բանակցություններին, եւ այդ մասնակցությունը իրեն լիովին արդարացրել է:

Ոչ այսօր, ոչ վաղը Հայաստանը մտադիր չէ ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա: Ղարաբաղի անունից որոշումներ է ընդունում միայն նրա ղեկավարությունը՝ բնականաբար կրելով դրա պատասխանատվությունը ոչ միայն Ղարաբաղի բնակչության, այլեւ ողջ հայ ժողովրդի առջեւ: Դա չի նշանակում, անշուշտ, որ Հայաստանը հրաժարվում է խորհրդակցել Ղարաբաղի իշխանությունների հետ եւ նրանց համոզել այն հարցերում, որոնք ճիշտ եւ նպատակահարմար է համարում: Բայց միեւնույն է, վերջնական որոշումը մնում է Ղարաբաղի իշխանություններին:

Առասպել երկրորդ. ***Եթե Հայաստանը խիստ կեցվածք ընդունի Թուրքիայի նկատմամբ, նրա առջեւ դնի Ցեղասպանության ճանաչման, Կարսի պայմանագիրը չեղյալ հայտարարելու, հայկական հողերը վերադարձնելու հարցերը, ապա Թուրքիան եւ Ադրբեջանը ավելի գիջ[illegible] նան Ղարաբաղի հարցում:***

Իմ խորին համոզմամբ, որը ես կարող եմ ապացուցել նաեւ կոնկրետ քաղաքական հաշվարկներով, այդպիսի կեց[illegible] վածքը ոչ միայն որեւէ օգուտ չի բերի Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմանը, այլեւ նոր բարդություններ կառաջացնի Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություններում, որոնք ավելի եւս կծանրացնեն Հայաստանի ու Ղարաբաղի դրությունը: Անզեն աչքով իսկ կարելի է նկատել, որ ընդհակառակը, Ադրբեջանի եւ Թուրքիայի համար դա լրացուցիչ կռվան կհանդիսանար ապացուցելու Հայաստանի ծավալապաշտական նկրտումները եւ նրա դեմ լարելու միջազգային հանրության առանց այդ էլ աննպաստ կարծիքը:

Առասպել երրորդ. ***Եթե Հայաստանը ճիշտ օգտագործեր Սփյուռքի լոբբիստական կարողությունները, ապա սփյուռքահայ համայնքները թույլ չէին տա իրենց կառավարություններին ոտնահարել Լեռնային Ղարաբաղի իրավունքները:***

Այս առասպելը մեկնաբանելուց առաջ նախ պետք է ճշտել, որ լոբբիստական կարողություններ ունի միայն ամերիկահայ գաղութը, մյուս երկրներում լոբբիստական ավանդույթներ, հետեւաբար նաեւ կազմակերպված լոբբիստական խմբեր գոյություն չունեն:

Չթերագնահատելով, անշուշտ, ամերիկահայ համայնքի լոբբիստական աշխատանքը Հայաստանին լուրջ մարդասիրական օգնություն ցուցաբերելու եւ ամերիկյան կոնգրեսում Ղարաբաղի նկատմամբ դրական կարծիք ձեւավորելու հարցերում, դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ, սակայն, որ լոբբիզմը սահման ունի. նրա ազդեցությունը վերջանում է այնտեղ, որտեղ բախվում է ԱՄՆ-ի ազգային շահերին: Դա վերաբերում է ոչ միայն հայկական, այլեւ բոլոր մյուս լոբբիստական կազմակերպություններին, այդ թվում նաեւ հրեական-

նին, որը թեեւ ամենահզորն է, բայց ամենեւին ոչ ամենակարող:

Առասպել չորրորդ. ***Ռուսաստանի ներկայիս կոսմոպոլիտ իշխանությունները չեն հասկանում իրենց երկրի ստրատեգիական շահերը (այս հարցում մեղավոր է նաեւ Հայաստանը, որը չի կարողանում դա նրանց բացատրել): Բայց շուտով Ռուսաստանում իշխանության կգան իսկական ազգայնական ուժեր, որոնք Հայաստանը դարձնելով Կովկասի Իսրայել, Ղարաբաղի հարցը մեր օգտին կլուծեն:***

Կասկածելի ու հարցական են, եթե չասենք անհեթեթ, այս առասպելի անխտիր բոլոր դրույթները.

– արդյոք իսկապե՞ս կոսմոպոլիտ են Ռուսաստանի ներկա իշխանությունները.

– իրո՞ք նրանք չեն հասկանում իրենց երկրի ստրատեգիական շահերը.

– Հայաստա՞նն է, որ դա պետք է հասկացնի նրանց.

– Ռուսաստանին դաս տվողները, արդյոք, իրենց ծիծաղելի վիճակի մեջ չե՞ն դնում՝ վարկաբեկելով հայի կերպարը.

– իսկապե՞ս Ռուսաստանում իշխանության են գալու ազգայնական ուժերը.

– նրանք արդեն խոստացե՞լ են Ղարաբաղը նվիրել Հայաստանին կամ ճանաչել նրա անկախությունը, այդ խոստումը եղել է բանավոր, թե՞ գրավոր.

– եւ վերջապես, ինքնախաբեությամբ Ռուսաստանի կամ որեւէ այլ տերության խաղալիքը դառնալու մոլագարությունը դեռեւս որքա՞ն ժամանակ պետք է լինի հայի կենսակերպը:

Մի՞թե մեծ խելք է պետք հասկանալու համար, որ ինչպիսի իշխանություն էլ լինի Ռուսաստանում, միեւնույն է՝ նա չի կարող ճանաչել Ղարաբաղի անկախությունը, որովհետեւ իր կազմում ունի քսան Ղարաբաղ:

Առասպել հինգերորդ. ***Ադրբեջանը շատ ակտիվ գործելով միջազգային ատյաններում եւ զանգվածային լրատվամիջոցներում, փաստորեն շահել է [illegible] պատերազմը (որը հաճախ շփոթվում է դիվանագիտական հաղթանակի հետ):***

Միակ առասպելն է, թերեւս, որ ամենեւին հիմքից զուրկ չէ. Հայաստանի եւ Ղարաբաղի համեմատ Ադրբեջանն իսկապես մեծ աղմուկ է բարձրացնում միջազգային ատյաններում ու լրատվամիջոցներում: Պատճառը, սակայն, պարզից էլ պարզ է ու միանգամայն բնական: Էլ ի՞նչ էր մնում անելու Ադրբեջանին. նա տանուլ է տվել ռազմական առճակատումը, լիովին կորցրել է վերահսկողությունը Ղարաբաղի վրա, զրկվել է զգալի տարածքներից, ընկել շուրջ հինգ հարյուր հազար փախստականների ծանր ճնշման տակ: Ադրբեջանի Նախագահն ու արտգործնախարարը ի՞նչ պատասխան պետք է տային իրենց ժողովրդին, եթե ոչ գիշեր-ցերեկ աղմուկ բարձրացնելով ձեւացնել, թե խիզախորեն պայքարում են՝ Ղարաբաղն ու կորցրած տարածքները ետ նվաճելու համար:

Եթե անգամ ճիշտ է այն պնդումը, թե մենք իբր տանուլ ենք տվել քարոզչական պատերազմը, ապա պետք է գնահատել. ո՞րն էր ավելի նախընտրելի՝ պահել Ղարաբաղը եւ կորցնել քարոզչական պատերազմը, թե՞ կորցնել Ղարաբաղը եւ փայլուն հաղթանակ տանել քարոզչության ասպարեզում: Պատմության մեջ մենք քարոզչական ու բարոյական այնքան հաղթանակներ ենք տարել, որ գուցե մեր քիմքին դա է պատշաճում: Սա չի նշանակում, անշուշտ, որ մենք պետք է անտեսենք քարոզչական գործունեությունը եւ միջոցներ չձեռնարկենք չեզոքացնելու համար ադրբեջանական քարոզչության ազդեցությունը:

Սահմանափակելով առասպելների թվարկումը, այժմ թեթեւակի անդրադառնանք նաեւ մի քանի հանելուկների՝ նրանց լուծումը թողնելով, սակայն, բացառիկ հնարամտության տիրապետող մարդկանց:

Հանելուկ առաջին. ***Կարելի է հասնել Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչմանը եւ միաժամանակ խուսափել պատերազմից (Վազգեն Մանուկյանի նախընտրական ծրագրից):***

Ի՞նչ է սա. հանճարի մտքի փայլատակո՞ւմ՝ անմատչելի խեղճ մահկանացուներիս, թե՞ ուղեղի ժամանակավոր մթագնում, որը ամեն մարդու հետ կարող է պատահել: Կամ գուցե Նախագահ Ալիեւը հանելուկի հեղինակի ականջին ինչ-որ բան է փսփսացել, որ մենք չգիտենք: Համենայն դեպս, հայ քաղաքական մտքին մի այնպիսի կնճռոտ առեղծված է մատուցվել, որից անգամ Էյնշտեյնը դժվար թե գլուխ հաներ:

Հանելուկ երկրորդ. ***Հնարավոր է անտեսել միջազգային հանրությանը եւ շարունակել օգնություններ ստանալ նրանից:***

Գործի բերումով միջազգային հանրության պատասխանատուների հետ ամենաշատը ես եմ շփվում, բայց երբեւէ նրանցից այդպիսի հավաստիացում չեմ ստացել: Ընդհակառակը, ամեն քայլափոխում մենք տեսնում ենք օգնությունների նրբորեն քողարկված պայմանավորումը քաղաքական հանգամանքներով: Գուցե այստեղ էլ մենք ենք մեղավոր, որ չենք կարողանում միջազգային հանրությանը բացատրել իր ստրատեգիական շահերը: Հիրավի, մենք մոռանում ենք համաշխարհային ազգ լինելու, հետեւաբար ամբողջ աշխարհին դաս տալու մեր պատմական առաքելությունը:

Հանելուկ երրորդ. ***Մենք՝ ընդդիմադիրներս, ղարաբաղյան հակամարտության կարգավորման ծրագիր չունենք, բայց քանի որ Հայաստանի ներկա ապազգային իշխանություններն ի վիճակի չեն լուծելու այդ հարցը, ապա իշխանությունը տվեք մեզ, եւ մենք կլուծենք՝ ձեռի հետ էլ վերականգնելով Հայաստանի արդյունաբերությունը, հինգ-տաս անգամ բարձրացնելով աշխատավարձը, երկիրը ողողելով արտասահմանյան ներդրումներով:***

Չգիտեմ իսկ, արժե, թե չարժե մեկնաբանել այս հանելուկը. համենայն դեպս, չեմ կարող չնշել, որ քաղաքականության մեջ ազնիվ խոսքն ամենեւին էլ լավագույն փաստարկը չէ, եւ երբեւէ ժողովուրդը հավատալով որեւէ մեկի ազնիվ խոսքին՝ նրան իշխանություն չի տվել, մանավանդ, երբ այդ խոսքը, հանելուկ պարունակելուց բացի, մոտենում է նաեւ հրաշապատում հեքիաթի ժանրին:

Փաթեթային, թե՞ փուլային լուծում

Ընդդիմադիր մամուլի կողմից ջանք չի խնայվում հասարակությանը տպավորելու համար, թե իբր Լեռնային Ղարաբաղը պաշտպանում է կարգավորման փաթեթային տարբերակը, իսկ Հայաստանը՝ փուլայինը, որը հղի է լուրջ վտանգներով: Ես թերեւս չանդրադառնայի այս հարցին, եթե ի զարմանս ինձ, նման հայտարարություններ չանեին նաեւ Ղարաբաղի ներկայացուցիչները:

Սեպտեմբերի 26-ի մամլո ասուլիսին ուշադիր հետեւողները պետք է նկատած լինեին, որ թե՛ փաթեթային, թե՛ փուլային լուծումները ես համարել եմ **«իրական (ռեալ) տարբերակներ»**: Նշել եմ նաեւ, որ Հայաստանը լուրջ վերապահումներով ընդունել է համանախագահների ներկայացրած առաջին ծրագիրը, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ կարգավորման փաթեթային տարբերակ: Եւ միայն այն բանից հետո, երբ Ադրբեջանը եւ Լեռնային Ղարաբաղը գրավոր կերպով կտրականապես մերժել են այդ տարբերակը, համանախագահներն ստիպված են եղել կողմերին առաջարկել փուլային լուծում:

Ասուլիսում իմ կողմից մասնավորապես ասված է. «Ըստ էության ի՞նչ տեղի ունեցավ: Միջնորդներն էլ, մենք բոլորս էլ համոզվեցինք, որ այսօր Ղարաբաղը եւ Ադրբեջանը պատրաստ չեն քննարկել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը, որովհետեւ նրանցից յուրաքանչյուրն ունի այդ կար-

գավիճակի մասին իր սեփական պատկերացումը, որը կտրուկ հակադրվում է հակառակորդի տեսակետին: Այս հարցում բոլորը համոզվեցին: Ես կարծում եմ, ընտրվեց միակ իրատեսական մոտեցումը: Եթե լուծման նման տարբերակը չի ընդունվում, այսինքն իրագործելի չէ, այսօր պետք է փորձ կատարել իրագործել լուծման «փուլ առ փուլ» տարբերակը» («Հայաստանի Հանրապետություն», 27 սեպտեմբերի, 1997 թ.):

Մերժելով նախ փաթեթային, ապա՝ փուլային լուծումները եւ այսօր առաջարկելով կրկին վերադառնալ փաթեթային տարբերակին, ղարաբաղյան կողմն անհարմար դրության մեջ է դրել թե՛ Ղարաբաղը, թե՛ Հայաստանը: Այնուամենայնիվ, վիճակը ես ողբերգական կամ փակուղային չեմ համարում, քանի որ հնարավոր է այդ երկու տարբերակները հեշտությամբ համատեղել: Գաղափարը շատ պարզ է. բանակցությունների արդյունքում ստորագրվում է կարգավորման փուլային տարբերակը, բայց այն կիրառվում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցումից հետո: Դրանով Ղարաբաղը միջազգային հանրությանն ապացուցում է իր կառուցողականությունը, ցույց է տալիս, որ ոչ մի մտադրություն չունի պահպանել գրավված տարածքները, իսկ մյուս կողմից՝ լուրջ առաջխաղացում է արձանագրվում կարգավորման գործընթացում, եւ վերսկսվում են շուրջ մեկ տարի ընդհատված բանակցությունները:

Գլխավորն այսօր ընդհատված բանակցությունների վերսկսումն է, որի համար անհրաժեշտ է կարճ ժամանակում վերջիվերջո հակամարտող կողմերի միջեւ համաձայնեցնել բանակցությունների հիմք հանդիսացող փաստաթղթի նախագիծը: Եթե դա տեղի չունենա մինչեւ ԵԱՀԿ նախարարների խորհրդի առաջիկա նիստը, որը կայանալու է այս տարվա դեկտեմբերին Կոպենհագենում, ապա մեզ լուրջ բարդություններ կարող են սպասել:

Դավադրությունը բացառվում է

Ընդդիմության կողմից փորձ է արվում ստեղծել նաեւ այն տպավորությունը, թե համանախագահների կողմից Ղարաբաղի դեմ դավադրություն է կազմակերպվում, որին ապաշնորհության պատճառով կամ դավաճանական դիտավորությամբ մասնակցում է նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նման տպավորության ստեղծման նպատակով մասնավորապես շահարկվում է բանակցությունների գաղտնիության հանգամանքը, թեեւ այդ մտավախությանը, կարծում եմ, ես սպառիչ կերպով անդրադարձել եմ ՀՀՇ 9-րդ համագումարի իմ ելույթում: Ստիպված եմ կրկնել ելույթի համապատասխան հատվածը.

«Գաղտնին անպայման դավադրություն չի նշանակում: Սա պարզապես միջազգային դիվանագիտական պրակտիկա է՝ հեշտացնելու համար բանակցությունների գործընթացը, այն հեռու պահելով ավելորդ աղմուկից ու պրոպագանդիստական շահարկումներից: Բավական է հիշեցնել, որ արաբա-իսրայելյան կարգավորման ներկա գործընթացին նախորդել են տարիներ տեւած գաղտնի բանակցություններ:

Հասկանալի է, որ գաղտնի է ընթանալու միայն բանակցությունների փուլը, իսկ համաձայնությունների կայացումից հետո, բայց վերջնական պայմանագրերի ստորագրումից առաջ, կարգավորման ծրագիրը, բնականաբար, ներկայացվելու է ինչպես մեր, այնպես էլ Արցախի եւ Ադրբեջանի ժողովուրդների դատին...

Մի բանում ձեզ կարող եմ լիովին վստահեցնել. Հայաստանը երբեւէ չի ստորագրի որեւէ փաստաթուղթ, որի տակ չի լինի նաեւ Լեռնային Ղարաբաղի ստորագրությունը» («Հայաստանի Հանրապետություն», 15 հուլիսի, 1997 թ.):

Թվում է, թե քիչ թե շատ տրամաբանող եւ տարրական մտավոր կարողություններ ունեցող մարդկանց համար ասված

է ամեն ինչ: Բայց աճպարարության սովոր եւ ժողովրդին մոլորության մեջ գցելու տենդով տառապող մարդկանց համար ի՞նչ փույթ հաշվի նստել տրամաբանության կամ ընդհանրապես բանականության հետ, երբ կարելի է ընդդիմախոսի խոսքերն աղավաղելու եւ երեւակայական վերագրումներ կատարելու միջոցով քողածածկել սեփական մերկությունը՝ հույս դնելով ստորագույն մարդկային բնազդների վրա:

Դավադրությունն, ըստ էության, բացառվում է ոչ թե ենթակայական (սուբյեկտիվ) հանգամանքներով, այսինքն ոչ թե այն պատճառով, թե Լեւոն Տեր-Պետրոսյանը կամ այլ ոմն այդպես է կամենում կամ պատկերացնում, այլ զուտ իրավական առումով: Այսինքն՝ գործելու է Ղարաբաղի հարցի կարգավորման վերահսկման հստակ իրավական մեխանիզմ, որն ընդգրկելու է հետեւյալ հաջորդական հանգրվանները.

ա) ինչպես վերը նշվեց, համաձայնությունների կայացումից հետո, բայց վերջնական պայմանագրերի ստորագրումից առաջ կարգավորման ծրագիրը ներկայացվելու է շահագրգիռ ժողովուրդների դատին.

բ) կարգավորման ցանկացած ծրագրի կամ պայմանագրի տակ լինելու է Լեռնային Ղարաբաղի ստորագրությունը.

գ) ստորագրումից հետո կարգավորման ծրագիրը կամ պայմանագիրը պետք է վավերացվի հակամարտող կողմերի խորհրդարանների կողմից:

Ինչպես տեսնում ենք, ե՛ւ ժողովուրդը, ե՛ւ ընդդիմությունը հնարավորություն է ունենալու լիակատար կերպով վերահսկել կարգավորման գործընթացը եւ ազդել նրա արդյունքների վրա: Ես միայն ուրախ կլինեմ, եթե հրապարակային քննարկումների եւ խորհրդարանական բանավեճերի ընթացքում ընդդիմությունը հանդես գա այլընտրանքային առաջարկներով ու ծրագրերով, որոնք մեզ հնարավորություն կտան կայացնել ճիշտ որոշումներ, քանի որ Լեռնային Ղարաբաղի հարցում մենք սխալվելու իրավունք չունենք:

Ինքնախաբեությամբ չզբաղվենք եւ զուր պատրանքներ չփայփայենք՝ Ղարաբաղի անկախության հարցում մենք դաշնակիցներ չունենք: Ոչ ոք մեր փոխարեն չի լուծելու առկա կնճիռը: Մենք ենք լուծելու, եւ լուծելու ենք մեր ուժերի ներածի չափով: Մեր միակ դաշնակիցը արկածախնդրության մերժումն է:

Ես նպատակ չեմ հետապնդում ողբերգականացնել իրավիճակը եւ ամենեւին տագնապ չեմ հնչեցնում, քանի որ վստահ եմ մեր ժողովրդի ողջամտությանը:

ԵԼՈՒՅԹ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

(8 հունվարի, 1998թ.)[2]

Նիստն ընթացել է երկու օր (հունվարի 7–8), օրակարգում՝ «Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման ուղիները»: Նիստին մասնակցել են՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Բաբկեն Արարքցյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գագիկ Հարությունյանը, Ալեքսանդր Արզումանյանը, Վազգեն Սարգսյանը, Սերժիկ Սարգսյանը, Վանո Սիրադեղյանը, Արկադի Ղուկասյանը, Լեոնարդ Պետրոսյանը, Օլեգ Եսայանը, Սամվել Բաբայանը, Արա Սահակյանը, Կարապետ Ռուբինյանը, Տեր-Հուսիկ Լազարյանը, Վարդան Օսկանյանը, Շահեն Կարամանուկյանը, Լեւոն Զուրաբյանը, Հովհաննես Իգիթյանը, Բագրատ Ասատրյանը: Սույն հրապարակման մեջ դուրս են թողնված պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները:

Նախքան բուն ելույթին անցնելը, կարծում եմ, ավելորդ չէ ամփոփ ձեւով ներկայացնել երկու օրվա ընթացքում այստեղ հնչած որոշ կարծիքներ, որոնք կարեւոր են քննարկվող հարցի համակողմանի լուսաբանման տեսակետից: Նախապես ներողություն եմ խնդրում, եթե այդ ամփոփումը որոշ դեպքերում չի ապահովում կարծիքների բառացի վերարտադրությունը. համենայն դեպս դրանց բովանդակության ճշգրտությունը ես երաշխավորում եմ: Եւ այսպես.

---

[2] ***Լեւոն Տեր-Պետրոսյան***, *Ընտրանի, Երեւան, 2005, էջ 647–660:*

«Շրջափակումները չեն ազդում Հայաստանի տնտեսական զարգացման վրա: Ամեն ինչ կախված է կառավարության աշխատանքի ճիշտ կազմակերպումից եւ ուժերի մոբիլիզացիայից» (Ռ. Քոչարյան, Վ. Սարգսյան).

«Ղարաբաղյան հակամարտությունը խոչընդոտ չէ արտասահմանյան ներդրումների համար: Ներդրումների հոսքի ապահովումը կախված է ակտիվ ու լայնամասշտաբ մարկետինգային քաղաքականությունից, մասնավորապես ինտերնետի հնարավորությունների մաքսիմալ օգտագործումից» (Ռ. Քոչարյան).

«Հայաստանի բյուջեն կարելի է երկու-երեք անգամ մեծացնել՝ պայքարելով ստվերային տնտեսության դեմ եւ խստացնելով հարկերի հավաքման պրոցեսը» (Ռ. Քոչարյան, Վ. Սարգսյան).

«Սփյուռք–Հայաստան հարաբերությունների սերտացման դեպքում Սփյուռքից կարելի է ստանալ տարեկան 400–500 միլիոն դոլարի օգնություն» (Ռ. Քոչարյան, Վ. Սարգսյան).

«Արտագաղթն այլեւս չի սպառնում Հայաստանին, եւ ընդհակառակը՝ արդեն դիտվում են ներգաղթի միտումներ: Դրա ապացույցն է այն, որ եթե անցյալ տարի դպրոցներում երեք-չորս առաջին դասարաններ էին բացվում, ապա այս տարի բացվել են վեց-յոթ դասարաններ» (Ռ. Քոչարյան).

«Հնարավոր չէ Հայաստանը լրիվ մեկուսացնել: Մեզ կօգնեն Ռուսաստանը եւ Իրանը: Իսկ եթե ինչ-ինչ պատճառներով Ռուսաստանը դադարեցնի զենքի մատակարարումը, ապա մենք զենք կստանանք Իրանից» (Վ. Սարգսյան).

«Իսրայելի օրինակը ցույց է տալիս, որ կարելի է զարգանալ նաեւ մեկուսացման պայմաններում» (Ռ. Քոչարյան).

«Ղարաբաղյան կարգավորման պրոցեսում պետք է վարել ակտիվ սառեցման քաղաքականություն» (Վ. Սարգսյան, Ս. Սարգսյան).

«Ղարաբաղի հարցում հիմա կարիք չունենք փութ[illegible] գնալու: Կզիջենք այն ժամանակ, երբ հարկադրված կլի[illegible]» (Վ. Սարգսյան).

«Ղարաբաղում ստատուս-քվոյի պահպանումը մեզ հա[illegible]մար վտանգավոր չէ» (Ա. Ղուկասյան).

«Ապաշրջափակումը հնարավոր չէ ապահովել. ցանկա[illegible]ցած պատրվակով Ադրբեջանը կարող է խախտել այն» (Ա. Ղուկասյան).

«Փուլային տարբերակը կարող է մեծացնել պատերազմի վտանգը: Նոր դիրքերը մեզ համար դժվար կլինի ամրացնել» (Ս. Սարգսյան).

«Փուլային տարբերակը Ղարաբաղի ժողովուրդը վատ կընկալի, Ղարաբաղում արտագաղթ կսկսվի» (Օ. Եսայան).

«Մենք համոզված ենք, որ կարող ենք անկախ լինել. մեզ համար անընդունելի է մնալ Ադրբեջանի կազմում» (Լ. Պետրոսյան).

Այս կարծիքներից մի քանիսին ռեալիկի կարգով արդեն արձագանքել եմ, ուստի հարկ չեմ համարում կրկնել իմ առարկությունները: Մյուսներին կփորձեմ անդրադառնալ ելույթի ընթացքում:

* * *

Այժմ անցնենք բուն նյութին: Ինչպես իմ բացման խոսքում ասացի, գոյություն ունի Ղարաբաղի հարցի կարգավորման երեք հնարավորություն.

1. Փաթեթային տարբերակ.

2. Փուլային տարբերակ.

3. Ստատուս-քվոյի պահպանում:

Ես այսօր չեմ պատրաստվում խոսել առաջին երկու տարբերակների առավելությունների ու թերությունների մասին, քանի որ նախ՝ բոլորդ էլ դրանց ծանոթ եք, եւ ապա՝ մեր դի-

տողություններն ու վերապահումներն այդ տարբերակների վերաբերյալ արտահայտված են Մինսկի խմբի համանախագահությանն ուղղված պաշտոնական պատասխաններում (այդ փաստաթղթերը ձեզ բաժանված են): Բացի այդ, նշված տարբերակների մասին խոսելն իմաստ կունենա միայն այն բանից հետո, երբ պարզենք՝ մենք պատրա՞ստ ենք, կամ համոզվա՞ծ ենք, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծել այսօր, թե՞ դեռ անհրաժեշտ է սպասել, այսինքն՝ առայժմ պահպանել ստեղծված ստատուս-քվոն, հույս ունենալով, թե ժամանակը մեր օգտին կաշխատի, եւ Ղարաբաղի հարցը կլուծվի ինքնըստինքյան՝ աշխարհը վաղ թե ուշ կհաշտվի կատարված փաստի հետ: Քանի որ ինձ մոտ տպավորություն է առաջանում, որ շատերը հակված են երրորդ տարբերակին, ուստի ես կկենտրոնանամ բացառապես դրա վրա:

Տեսականորեն չեմ ժխտում, որ ստատուս-քվոյի պահպանումը թերեւս կարող էր լինել լավագույն ելքը, քանի որ ի տարբերություն առաջին երկու տարբերակների, որոնց հիմքում ընկած է փոխզիջման գաղափարը, այն ենթադրում է բացառապես հաղթական լուծում: Սակայն դա միայն տեսականորեն: Իսկ գործնականում այդ ճանապարհն ընտրելուց առաջ մենք պարտավոր ենք պատասխանել այն հարցին, թե Հայաստանը, որ Ղարաբաղի գոյության միակ երաշխիքն է, ի վիճակի՞ է երկար ժամանակ պահպանել ստատուս-քվոն՝ միաժամանակ ապահովելով իր նորմալ կենսագործունեությունը, տնտեսական բարգավաճումը, ռազմական հզորությունը, ինչպես նաեւ հաղթահարելով շրջափակումների հարուցած դժվարություններն ու դիմագրավելով միջազգային աճող ճնշումները: Կարող եք ինձ հոռետես համարել, բայց ես չեմ հավատում նման հրաշքի: Եւ ահա, թե ինչու:

Վերջին տարիների մակրոտնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունն ինձ բերել է այն համոզման, որ Հայաստանն իր տնտեսական զարգացման մեջ արդեն բախվում է, կարելի է ասել, ֆիզիկական լիմիտների [illegible] կառավարության գործունեության արդյունավետությունից կամ այլ սուբյեկտիվ գործոններից: Թե ինչ լիմիտների մասին է խոսքը, ես կասեմ հետո, իսկ առայժմ դիտարկենք այդ մակրոտնտեսական ցուցանիշները.

	1994	1995	1996	1997*
ՀՆԱ-ի աճը նախորդ տարվա նկատմամբ	5,4%	6,9%	5,8%	3%
Արդյունաբերության աճը նախորդ տարվա նկատմամբ	5,3%	1,5%	1,4%	1%
Արտահանման աճը նախորդ տարվա նկատմամբ	38%	25%	7,2%	-20%
Ներմուծման աճը նախորդ տարվա նկատմամբ	54,9%	71,1%	27%	4%

* 1997 թ. տվյալները նախնական են.

Աղյուսակից պարզորոշ կերպով երեւում է, որ թեեւ գրեթե բոլոր ցուցանիշների գծով աճը դեռեւս շարունակվում է, բայց արդեն առկա է նրա տեմպի դանդաղեցման ակնհայտ միտում: Եւ ամբողջ դժբախտությունն այն է, որ այս պրոցեսը ոչ միայն շարունակվելու է, այլեւ մեկ-երկու տարուց մեր տնտեսության մեջ դրսեւորվելու են նաեւ անկման միտումներ:

Ի՞նչն է պատճառը: Արդյո՞ք մեր վատ աշխատանքը, արդյո՞ք տնտեսական բարեփոխումների ձախողումը կամ դանդաղեցումը: Չեմ ժխտում, որ այստեղ կան ռեզերվներ, եւ որ մեր աշխատանքի բարելավման ու վերափոխումների արագացման շնորհիվ կարելի է հասնել որոշ դրական տեղաշարժի: Բայց միեւնույն է, դա չի կարող էապես ազդել Հայաստանի տնտեսական զարգացման վրա, քանի որ երեւույթն, իմ կարծիքով, կախված է շատ ավելի օբյեկտիվ ու խորքային գործոններից:

Այդ գործոններն են, ահա, որ ես կոչում եմ Հայաստանի տնտեսական զարգացման ֆիզիկական լիմիտներ: Դրանք են՝ ղարաբաղյան հակամարտության պատճառով խորացող

Հայաստանի քաղաքական մեկուսացումը, շրջափակումները եւ արտասահմանյան ներդրումների բացակայությունը: Քանի դեռ չեն վերացել այդ գործոնները, ինչպիսի իշխանություն էլ լինի Հայաստանում, ինչպիսի հանճարեղ մարդիկ էլ գտնվեն կառավարության ղեկին, միեւնույն է, ոչ միայն չի հաջողվելու ապահովել երկրի տնտեսական զարգացման նորմալ ընթացքը, այլեւ հնարավոր չի լինելու լուծել առկա սոցիալական խնդիրները:

Աշխատավարձերը, թոշակները, նպաստները մնալու են նույն խղճուկ մակարդակին, Աղետի գոտու վերականգնումը ձգձգվելու է տասնյակ տարիներ, խորանալու է գործազրկությունը: Բյուջետային աշխատողների աշխատավարձն այսօր կազմում է շուրջ 20 դոլար: Եթե հաջողվի անգամ այդ գծով ապահովել տարեկան 20–30 տոկոսի աճ, ապա պատկերացրեք, ինչ աշխատավարձ ենք մենք վճարելու հինգ տարի հետո: 40–50 դոլա՞ր: Նկատի ունենալով դրամի արժեզրկումը եւ անխուսափելի սղաճը, դժվար չէ կռահել, որ հինգ տարի հետո այդ 40–50 դոլարը կունենան նույն արժեքը, ինչ այսօրվա 20 դոլարը, այսինքն՝ բնակչության կենսամակարդակի որեւէ բարելավում տեղի չի ունենա, եթե Աստված, իհարկե, մեզ փրկի վատթարացումից: Եթե չեմ սխալվում, այստեղ կարծիք արտահայտվեց, որ մեր ժողովուրդը հանուն Ղարաբաղի դեռ կդիմանա, եւ որ Հայաստանին սոցիալական բունտ չի սպառնում: Ես էլ եմ կարծում, որ մեր ժողովուրդը հանուն իր սոցիալական վիճակի բարելավման չի վտանգի Ղարաբաղի գոյությունը: Բայց նրա սոցիալական դժգոհությունը կարտահայտվի բոլորովին այլ կերպ՝ արտագաղթի վերսկսումով:

Հետաքրքիր է, ինչի՞ վրա ենք հույս դնում՝ խափանելով կամ, մեղմ ասած, հետաձգելով ղարաբաղյան հակամարտության կարգավորումը: Այն համոզվածության վրա՞,

որ շրջափակումները չեն խանգարում Հայաստանի տնտեսական զարգացմանը,

որ արտասահմանյան ներդրումները կարելի է ապահովել ճիշտ մարկետինգային քաղաքականություն վարելու շնորհիվ,

որ բյուջեն կարելի է զգալիորեն մեծացնել՝ խստացնելով հարկային կարգապահությունը,

որ Սփյուռքից կարելի է ստանալ հարյուրավոր միլիոններ օգնություն,

որ մեզ կօգնեն ու մեկուսացումից կհանեն Ռուսաստանն ու Իրանը,

որ ինչ որ հաջողվել է Իսրայելին, մեզ էլ կհաջողվի,

որ պետք է փոխզիջման գնալ այն ժամանակ, երբ հարկադրված լինենք:

Այս պնդումներն այնքան ծանրակշիռ են թվում, որ կարծում եմ, անհրաժեշտ է մեկ առ մեկ անդրադառնալ դրանց:

* * *

Իմ կարծիքով, ղարաբաղյան հակամարտության չկարգավորված վիճակը բացասաբար է անդրադառնում Հայաստանի տնտեսական զարգացման վրա մի շարք առումներով:

Առաջին. Շրջափակումը շուրջ 30 տոկոսով թանկացնում է Հայաստանի արտաքին բեռնափոխանակությունը, որ ինքնին արդեն ահավոր բեռ է թե՛ մեր արդյունաբերողների, թե՛ գործարարների համար: Այս թիվը ոչ մտացածին է, ոչ էլ ենթադրություն, այլ լուրջ տնտեսական հաշվարկի արդյունք: Դրանում դուք կհամոզվեք, կարդալով ՀՀ տրանսպորտի նախարարության ներկայացրած ծավալուն ուսումնասիրությունը եւ Համաշխարհային բանկի տեղեկանքը, որոնք պատրաստվել են իմ խնդրանքով, հատուկ այս նիստի համար: Իսկ եթե չեք հավատում նաեւ այս փաստաթղթերին, ապա

մտեք ցանկացած գործարան, ցանկացած շինհրապարակ, ցանկացած խանութ եւ հարցրեք, թե որքանով է շրջափակումն ազդում նրանց գործունեության վրա:

Շրջափակումը հատկապես խոչընդոտում է մեծածավալ ապրանքների արտահանմանը: Թերեւս զարմանալի թվա, եթե ասեմ, որ այս պահին մենք ունենք շուրջ 1 միլիարդ դոլարի ապրանքներ, որոնց արտահանումը չենք կարողանում իրականացնել նրանց մեծ բեռնատարողության պատճառով: Դրանք են՝ մոլիբդենի հանքաքարը, շինանյութը, բենտոնիտը, պերլիտները եւ գինին (մոլիբդենի խտանյութի ու կոնյակի փոխադրումն ինքնաթիռներով դեռ ինչ-որ կերպ արդարացվում է): Էլ չեմ խոսում «Նաիրիտի» մասին, որի շահութաբեր աշխատանքի համար պահանջվում է, որ օրական մեկ գնացք մտնի, մեկ գնացք դուրս գա գործարանից:

Անշուշտ, մեր բեռը զգալիորեն կթեթեւանար, եթե վերագործարկվեր թեկուզ միայն աբխազական երկաթուղին, որի խափանումը կապված չէ ղարաբաղյան հակամարտության հետ: Հայաստանը եւ Ռուսաստանը զգալի ջանքեր են գործադրել այդ ուղղությամբ, բայց դրանք քաղաքական նկատառումներով պատշաճ արձագանքի չեն արժանացել Վրաստանի կողմից: Ուստի նկատի ունենալով այդ դառը փորձառությունը, ինչպես նաեւ վրաց-աբխազական հարաբերությունների շարունակվող գերլարված վիճակը, ես վստահ եմ, որ այդ երկաթուղին առնվազն եւս հինգ տարի դեռ չի գործի: Այնպես որ մենք չենք կարող հույս դնել դրա վրա եւ առայժմ ստիպված ենք բավարարվել առկա ծախսատար ճանապարհներով: Քիչ էր, որ ծով չունենք, այժմ գործնականորեն զրկված ենք նաեւ երկաթուղիներից: Իսկ առանց երկաթուղիների դժվար է պատկերացնել քիչ թե շատ կենսունակ տնտեսություն:

Երկրորդ. Ինչ վերաբերում է այն պնդմանը, թե իբր արտասահմանյան ներդրումների հոսքը կախված չէ ղարաբաղյան հակամարտությունից, եւ դրանք կարելի է [illegible] եթե Հայաստանի իշխանություններն ավելի ակտիվ ու [illegible] մասշտաբ մարկետինգային քաղաքականություն վարեն, եւ, չմերժելով այդպիսի քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը, գտնում եմ, որ դրա արդյունքն այնուամենայնիվ չնչին է լինելու: Նախ, ոչ ոք չի կարող առարկել, որ Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը Հայաստանը, արտասահմանյան ներդրումների տեսակետից, դարձնում է ռիսկի գոտի: Օտար կապիտալը չի կարող հաշվի չառնել այդ հանգամանքը, եւ դա բազմիցս արտահայտվել է միջազգային տնտեսական կազմակերպությունների փորձագետների մակարդակում: Այնուհետեւ, ասվեց արդեն, որ շրջափակումները շուրջ 30 տոկոսով թանկացնում են Հայաստանի արտաքին բեռնափոխանակությունը, եւ դա նույնպես չի կարող չազդել արտասահմանյան ներդրողի մտադրությունների վրա. երբ բիզնեսը զգայուն է անգամ մեկ ցենտի տատանման նկատմամբ, ինչպե՞ս կարող է անտարբեր լինել 30 տոկոսի թանկության դեպքում: Եւ վերջապես, պետք է սառնասրտորեն գիտակցել, որ անգամ անկախ այս հանգամանքներից, Հայաստանը, որպես երեքուկես միլիոնանոց շուկա ինքնըստինքյան գրավիչ չէ արտասահմանյան ներդրումների համար: Հակամարտությունների կարգավորման պարագայում Անդրկովկասում կարող էր ձեւավորվել շուրջ 15 միլիոնանոց շուկա, որը անտարակուսելիորեն բարենպաստ հող կհանդիսանար օտարերկրյա ներդրումների համար: Մի գործարան կկառուցվեր Հայաստանում, մեկը՝ Վրաստանում, մի ուրիշն էլ Ադրբեջանում, որոնք հավասարապես կսպասարկեին այդ միացյալ շուկան: Բացի այդ, նման պայմաններում հնարավոր կլիներ իրականացնել նաեւ լայնածավալ տարածաշրջանային ծրագրեր, որոնք արտասահմանյան կապիտալի համար շատ ավելի գրավիչ են, քան կոնկրետ երկրներում կատարվող

ներդրումները: Մասնավորապես այն պատճառով, որ այդ տիպի ծրագրերը, կողմնակիորեն նպաստելով տարածաշրջանային կայունության ու անվտանգության ամրապնդմանը, տնտեսական նպատակահարմարությունից բացի ձեռք են բերում նաեւ քաղաքական նշանակություն:

Երրորդ. Հակամարտության առկայությունը Հայաստանին զրկում է իր ամենաբնական եւ շահավետ տնտեսական գործընկերներից՝ Ադրբեջանից, Թուրքիայից եւ մասամբ՝ Իրանից: Բնական եւ շահավետ նախ եւ առաջ այն պարզ պատճառով, որ նրանք մեր անմիջական հարեւաններն են: Գաղտնիք չէ, որ աշխարհի բոլոր նորմալ պետությունների արտաքին տնտեսական կապերի առնվազն հիսուն տոկոսը բաժին է ընկնում նրանց անմիջական հարեւաններին: Մինչդեռ Հայաստանի դեպքում դա գործնականում հավասարվում է զրոյի: Ես առիթ ունեցել եմ գնահատելու հայ-ադրբեջանական տնտեսական համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները, ուստի զերծ եմ մնում կրկնությունից: Չեմ կարծում, որ որեւէ մեկը կարող է ժխտել նաեւ հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների հսկայական պոտենցիալը, որը թերեւս երկրորդական դեր կարող է խաղալ Թուրքիայի տնտեսության զարգացման գործում, բայց Հայաստանի դեպքում, անկասկած, ունի կենսական նշանակություն: Մեր Արդյունաբերողների միության կատարած հաշվարկների համաձայն՝ Հայաստանի ու Թուրքիայի հաղորդակցության ճանապարհների վերագործարկման դեպքում, երկու երկրների միջեւ շրջանառությունը մեկ տարվա ընթացքում կարելի է հասցնել մոտ 600 միլիոն դոլարի: Այսինքն, մեկ տարվա ընթացքում Հայաստանի արտաքին առեւտրի շրջանառությունը կարող է աճել 50 տոկոսով (այսօր այն կազմում է մոտավորապես 1 միլիարդ 125 միլիոն դոլար): Իսկ դա նշանակում է արդյունաբերության զարգացման լուրջ հնարավորություններ, լրացուցիչ աշխատատեղեր եւ սոցիալական խնդիրների լուծման հնարներ:

Չպետք է մոռանալ նաեւ, որ բացի բնական տնտեսական գործընկեր լինելու ինքնին արժեքից, Թուրքիան եւ Ադրբեջանը Հայաստանի համար կարեւոր նշանակություն ունեն նաեւ որպես ամենակարճ տարանցիկ ճանապարհներ մի դեպքում՝ դեպի Եւրոպա եւ արաբական աշխարհ, մյուս դեպքում՝ դեպի Իրան, Ռուսաստան ու Միջին Ասիա: Այս առումով, ըստ իս, չարժե լուրջ պատրանքներ փայփայել՝ կապված Մեղրու ավտոճանապարհի հետ, քանի որ ակնհայտ է, որ Ջուլֆայի երկաթուղին մեկ-երկու շաբաթվա ընթացքում, այն էլ զգալիորեն նվազ ծախսով, շատ ավելի մեծ ծավալի բեռներ կարող էր տեղափոխել, քան այդ ավտոճանապարհը՝ մեկ տարում:

Եւ վերջապես **չորրորդ,** որն իմ կարծիքով ամենացավալին ու վտանգավորն է, ղարաբաղյան հակամարտության պատճառով Հայաստանը դուրս է մնում տարածաշրջանային կազմակերպություններից՝ դատապարտվելով օրեցօր խորացող մեկուսացման: Հայաստանն այժմ անդամակցում է ընդամենը երկու տարածաշրջանային կազմակերպության՝ ԱՊՀ-ին եւ Սեւծովյան տնտեսական համագործակցությանը: ԱՊՀ-ն, քաղաքական եւ անվտանգության կարեւորությամբ հանդերձ, ըստ էության որեւէ դեր չի խաղում Հայաստանի տնտեսության զարգացման մեջ: Իսկ Սեւծովյան տնտեսական համագործակցությունն առայժմ դուրս չի եկել բարի մտադրությունների արտահայտման ակումբի կարգավիճակից: Ինչ վերաբերում է Հայաստան–Իրան–Թուրքմենստան եւ Հայաստան–Իրան–Հունաստան եռակողմ համագործակցության ծրագրերին, ապա դրանք դեռեւս գտնվում են ձեւավորման փուլում, բայց անգամ լիարժեք իրականացման դեպքում էլ էական ազդեցություն չեն կարող ունենալ Հայաստանի տնտեսական զարգացման վրա: Բոլորիս համար էլ, կար-

ծում եմ, հասկանալի է, որ տնտեսական առումով շատ ավելի գործնական ու կարեւոր են ԳՈՒՈՒԱՄ-ը, ՏՐԱՍԵԿԱ-ն, ԷԿՕ-ն, նավթամուղային կոնսորցիումները, որոնց դռները, դժբախտաբար, առայժմ փակ են մեր առաջ:

Հակամարտության կարգավորման գործընթացի խափանման կամ նույնիսկ ձգձգման դեպքում մենք ոչ միայն չենք կարողանալու դուրս գալ առկա մեկուսացումից, այլեւ ավելի ու ավելի խորացնելու ենք այն: Խոսքը սոսկ տնտեսական մեկուսացման մասին չէ, քանի որ ինքնըստինքյան հասկանալի է, որ տնտեսական մեկուսացումն ունենալու է նաեւ անցանկալի քաղաքական հետեւանքներ: Չեմ բացառում, որ անգամ մեկուսացման պայմաններում Հայաստանը կարող է մասնակցել տարածաշրջանային կազմակերպությունների ինչ-ինչ ծրագրերի, բայց ես նկատի ունեմ ոչ թե սիմվոլիկ մասնակցությունը, այլ լիարժեք անդամակցությունը, քանի որ միայն այդ դեպքում կարելի է ակնկալել շոշափելի արդյունքներ:

* * *

Իսկ այժմ դիտարկենք այստեղ հնչած մյուս պնդումները:

Այն, որ պետք է պայքարել ստվերային տնտեսության դեմ եւ խստացնել հարկային կարգապահությունը, դժվար թե առարկություն վերցնի: Բայց որ դրանով հնարավոր է զգալիորեն մեծացնել բյուջեն, խիստ կասկածելի է թվում: Այդպիսի միջոցներով լավագույն դեպքում կարելի է հասնել ժամանակավոր արդյունքների, քանի որ ինքնըստինքյան հասկանալի է, որ բյուջեի աճը կախված է ոչ այնքան վարչարարական մեթոդներից, որքան տնտեսության զարգացման ընդհանուր դրական միտումներից: Իսկ այդպիսի միտումներ, ինչպես քիչ առաջ նշվեց, շրջափակումների շարունակման, ներդրումների բացակայության, քաղաքական ու տնտեսական մեկուսացման պայմաններում գոյություն չեն ունենալ: Բացի այդ, ես նաեւ չափազանց վտանգավոր եմ համարում այս բնագավառում վարչարարական մեթոդներով հրապուրվելը: Այդ իմաստով ինձ արդեն իսկ մտավախություն են ներշնչում կառավարության կողմից վերջերս ձեւնարկված որոշ քայլեր: Նկատի ունենալով բնագավառն սպասարկող իրավասու մարմինների (Հարկային վարչության, Մաքսային տեսչության, ՆԳՆ, Դատախազության) որոշակի հակումները, ես չեմ կասկածում, որ վարչարարական մեթոդների կիրառումը կհանգեցնի լուրջ չարաշահումների, որի արդյունքում մենք կունենանք աշխատատեղերի կրճատում, կապիտալի արտահանում, ապրանքաշրջանառության ու դրամաշրջանառության անկում, եւ վերջին հաշվով՝ հարկային մուտքերի նվազում, այսինքն՝ մենք կստանանք մեր ուզածի ճիշտ հակառակը: Այս ամենի հետեւանքը կլինի ժողովրդի առանց այդ էլ թշվառագույն սոցիալական վիճակի հետագա վատթարացումը եւ արտագաղթի նոր ալիքի ծավալումը:

Հասկանալի չէ նաեւ, թե ինչի վրա է հիմնված Սփյուռքից ակնկալվող օգնության հսկայական չափը (տարեկան շուրջ 400–500 միլիոն դոլար): Ասվում է, որ մինչեւ հիմա Սփյուռքի հետ լավ չենք աշխատել, նրա հետ հարաբերությունները ճիշտ չենք կառուցել, այդ պատճառով էլ առայժմ նրանից չնչին օգնություն ենք ստացել: Եթե անգամ այս դիտողություններն արդարացի համարենք, չեմ կարծում, որ Սփյուռքին քիչ թե շատ ծանոթ որեւէ մեկը կարող է պնդել, թե նա Հայաստանին տարեկան 400–500 միլիոն դոլարի օգնություն տրամադրելու կարողություն ունի: «Հայաստան» համահայկական հիմնադրամը առայժմ կարողացել է Սփյուռքից ապահովել տարեկան շուրջ 10 միլիոն դոլարի օգնություն: Թերեւս ավելի լավ աշխատելու, հարաբերությունները ավելի ճիշտ կազմակերպելու դեպքում, ամենալավատեսական

գնահատականներով, հնարավոր կլինի այդ թիվը հասցնել առավելագույնը տարեկան 20 միլիոնի: Ինչո՞ւ այդքան քիչ,– կհարցնեք դուք: Որովհետեւ բացի Հայաստանից, Սփյուռքն ունի նաեւ բազմաթիվ այլ հոգսեր. նա պարտավոր է ապահովել ազգային զանազան կառույցների՝ եկեղեցու, դպրոցների, ակումբների, կուսակցությունների, մամուլի, հիվանդանոցների, ծերանոցների ծախսերը, ինչպես նաեւ ֆինանսապես սպասարկել տարեցտարի ծավալվող լոբբիստական աշխատանքները: Սփյուռքից հարյուրավոր միլիոնների օգնության ակնկալիքն, ըստ այդմ, ոչ միայն առասպելական է, այլեւ վտանգավոր՝ եթե դա դիտվում է որպես Հայաստանի տնտեսական զարգացման կարեւոր երաշխիքներից մեկը:

Ինձ համար բաց է մնում նաեւ այն հարցը, թե ղարաբաղյան կարգավորման եւ Հայաստանի տնտեսական զարգացման գործում որքան հույսեր կարելի է կապել Ռուսաստանի եւ Իրանի հետ: Ռուսաստանն, այո, մինչեւ այսօր կենսական օգնություն է ցուցաբերել Հայաստանին՝ մասնավորապես էներգետիկ համակարգի կենսագործունեության ապահովման, բանակի կազմավորման, զենքի ու զինամթերքի մատակարարման բնագավառներում: Անկախությունից ի վեր հայ-ռուսական հարաբերությունները զարգացել են չափազանց բարենպաստ մթնոլորտում եւ այսօր գտնվում են ամենաբարձր մակարդակի վրա: Հայաստանը կարողացել է առավելագույնս օգտվել այդ հարաբերություններից, որը թերեւս անկախության շրջանի մեր կարեւորագույն նվաճումներից է: Բայց, դժբախտաբար, այս վիճակը հավերժ չի կարող շարունակվել: Նախ, ստիպված եմ կրկնել, որ Ռուսաստանը երբեք չի ճանաչելու Ղարաբաղի անկախությունը, թեկուզ միայն այն պատճառով, որ իր կազմում ունի մոտ քսան Ղարաբաղ: Այնուհետեւ, Ռուսաստանն այսօր այնպիսի կենսական շահերով է կապված Արեւմուտքի, մասնավորապես միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ, որ չի կարող կտրուկ հակադրվել Ղարաբաղի հարցի կարգավորման ԵԱՀԿ-ի կամ ՄԱԿ-ի ծրագրերին: Արդեն իսկ տեսանելի է, որ վերջերս, Մինսկի խմբի համանախագահության շրջանակում, Ռուսաստանը լիակատար համերաշխություն է ցուցաբերում ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի առաջարկած կարգավորման պլաններին: Արեւմուտքի հետ ավելորդ պրոբլեմներ չունենալու նույն պատճառով Ռուսաստանը մի օր նաեւ ստիպված է լինելու դադարեցնել զենքի մատակարարումները Հայաստանին: Ավելին, ես չեմ բացառում, այլեւ ընդհակառակը՝ չափազանց բնական ու հավանական եմ համարում, որ նկատի ունենալով կասպիական նավթի շահագործման եւ նավթամուղերի կառուցման խնդիրները, Ռուսաստանն առաջիկայում լուրջ ջանքեր է գործադրելու Ադրբեջանի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, եւ այդ դեպքում Հայաստանը կորցնելու է Անդրկովկասում Ռուսաստանի միակ դաշնակիցը կամ ստրատեգիական գործընկերը լինելու առավելությունը:

Ինչ վերաբերում է այն բանին, թե՝ եթե Ռուսաստանը դադարեցնի զենքի մատակարարումները, մենք զենք կստանանք Իրանից, ապա կարծում եմ, դա էլ զուրկ է առարկայական հիմքից: Ճիշտ է՝ իրանա-ադրբեջանական հակասությունների ֆոնի վրա Հայաստանի հզորացումն ու տնտեսական բարգավաճումը բխում են Իրանի պետական շահերից: Ճիշտ է նաեւ, որ Հայաստանի ամենախիստ շրջափակման տարիներին Մեղրու ճանապարհը եղել է մեր գոյատեւման ամենակարեւոր պայմաններից մեկը: Բայց դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ երկու հանգամանք: Առաջին՝ Մեղրու ճանապարհի սահմանափակ հնարավորությունները եւ լրացուցիչ ծախսատարությունը չեն կարող լուրջ տնտեսական համագործակցություն ապահովել մեր երկրների միջեւ: Երկրորդ՝ Իրանում պետական շահերից բացի գոյություն ունի նաեւ իսլամական համերաշխության գիտակցություն: Այդ

պատճառով իրանական ոչ մի կառավարություն չի համարձակվի զենք մատակարարել մի քրիստոնյա պետության՝ իսլամական որեւէ պետության դեմ օգտագործելու համար, եթե, իհարկե, այդ կառավարությունն իր գլխից ձեռք չի քաշել: Եւ վերջինը՝ եթե Իրանը կարող էր մեզ զենք մատակարարել, ապա ինչո՞ւ մինչեւ հիմա դա չի արել:

Չգիտեմ, որքա՞ն տեղին է նաեւ Իսրայելի եւ Հայաստանի իրավիճակների համեմատությունը: Իսրայելն, այո, բոլոր հարեւանների հետ ռազմական առճակատման մեջ գտնվելով հանդերձ, կարողացել է ապահովել իր տնտեսական զարգացումն ու ռազմական հզորությունը, բայց նա երբեք չի ենթարկվել այնպիսի շրջափակման, որի մեջ գտնվում է Հայաստանը: Իսրայելն ունի հարյուրավոր կիլոմետրանոց ծովային սահման եւ մի քանի հզոր ռազմա-առեւտրային նավահանգիստներ: Ինչպե՞ս կարելի է խոսել Իսրայելի մեկուսացման մասին, երբ նա նաեւ տարեկան շուրջ 4 միլիարդ դոլարի օգնություն է ստանում հրեական Սփյուռքից, մոտավորապես նույնքան էլ ԱՄՆ-ի կառավարությունից: Չեմ ուզում ավելի ծավալվել, բայց չմոռանանք նաեւ հրեաների հզոր ներկայությունը աշխարհի գերտերությունների քաղաքական կառույցներում, համաշխարհային ֆինանսական համակարգերում, զանգվածային լրատվության միջոցներում եւ այլն:

Ամենաապշեցուցիչը, սակայն այն պնդումն է, թե Ղարաբաղի հարցում մենք պետք է փոխզիջման գնանք այն ժամանակ, երբ հարկադրված կլինենք: Մի՞թե հասկանալի չէ, թե ինչ է նշանակում հարկադրված զիջում. հարկադրված զիջումը նշանակում է կապիտուլյացիա: Իսկ կապիտուլյացիայի ժամանակ դու ոչինչ չես զիջում, կամ եթե զիջում էլ ես՝ դրա դիմաց ոչինչ չես ստանում, այլ հլու հնազանդ ընդունում ես այն, ինչ փաթաթում են քո վզին: Քի՞չ է մեր անցյալի դառը փորձը: Քի՞չ են Բաթումի ու Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրերը, երբ ավելի վաղ հնարավորություն կար շատ ավելի ձեռնտու լուծումներ գտնելու, բայց [illegible] պատասխանատուները կորցրին այդ հնարավորությունը: Ստիպված եմ կրկնել իմ վերջին հոդվածի տրիվիալ միտքը՝ փոխզիջման պետք է գնալ այն պահին, երբ ուժեղ ես: Հայաստանը վաղն ավելի ուժեղ չի լինելու, քան այսօր: Հետեւաբար, վաղվա ցանկացած լուծում ավելի վատն է լինելու, քան այսօրվանը:

* * *

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի հարցի հրատապ լուծման անհրաժեշտության դեմ բերված ոչ մի փաստարկ, իմ կարծիքով, քննադատության չի դիմանում: Ավելին, այդ փաստարկների մեջ ես դիտում եմ հարցի էությունից շեղվելու եւ փաթեթային ու փուլային տարբերակների շուրջ ֆորմալ բանավեճ ծավալելու միտում: Թեեւ խոստացել էի չանդրադառնալ այդ տարբերակներին, բայց, քանի որ այստեղ դրա մասին շատ խոսվեց, ստիպված եմ անել որոշ պարզաբանումներ:

Հարցն այնպես է ներկայացվում, թե իբր Հայաստանը պաշտպանում է փուլային, իսկ Ղարաբաղը՝ փաթեթային տարբերակը: Մոռացության է տրվում այն փաստը, որ Հայաստանը (ճիշտ է՝ սկզբունքային վերապահումներով) ընդունել է փաթեթային տարբերակը, եւ Ղարաբաղն ինքն է կտրականապես մերժել այն: Փաթեթայինը մերժվելուց հետո մեզ ներկայացվել է փուլային տարբերակը, եւ Հայաստանը (նորից սկզբունքային վերապահումներով) այն ընդունել է: Ղարաբաղը սա նույնպես մերժել է եւ այժմ առաջարկում է կրկին վերադառնալ փաթեթային տարբերակին: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է այդ դեպքում Հայաստանը շարունակում պնդել փուլային տարբերակի վրա: Պատասխանում եմ. առաջին՝ մենք գտնում ենք, որ Ղարաբաղի հարցը պետք է

լուծել այսօր, իսկ այսօր ուրիշ լուծում չկա, քան փուլայինը, եւ երկրորդ՝ մենք համոզված ենք, որ երկար ժամանակ, գուցե թե երբեւէ, փաթեթային տարբերակի շուրջ համաձայնություն չի կայացվելու Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ: Փաթեթային տարբերակին վերադառնալու առաջարկն, ուստի, հետապնդում է ոչ թե հարցը լուծելու, այլ ժամանակ շահելու նպատակ: Կարծում եք՝ դժվա՞ր բան է ժամանակ շահելը, կարծում եք՝ ես չեմ կարող 3-4 տարի, մինչեւ իմ պաշտոնավարման ժամկետի ավարտը, պահպանել ղարաբաղյան ստատուս-քվոն: Բայց ի՞նչ է լինելու դրանից հետո, ի՞նչ անելանելի վիճակի մեջ է հայտնվելու հաջորդ Նախագահը:

Ավարտում եմ: Երկու օրերի քննարկումն, այսպիսով, ինձ լուրջ հիմքեր է տալիս կասկածելու, թե փուլային տարբերակին ընդդիմացողներն ընդհանրապես Ղարաբաղի հարցը լուծելու մտադրություն ունեն: Շատերն առանձնապես դա չեն էլ թաքցնում, ինչը պարզորոշ կերպով երեւում է ելույթիս սկզբում ամփոփված կարծիքներից: Փաթեթային, փուլային կամ այլ տարբերակների շուրջ թվացյալ բանավեճը, վստահ եմ, սոսկ շղարշ է՝ կարգավորման պրոցեսը ձգձգելու, այսօրվա իրավիճակը, այսինքն ստատուս-քվոն որքան հնարավոր է երկար պահպանելու համար: Ես ցավով նախազգում եմ, թե դա ինչ ահավոր վտանգ է ներկայացնում թե՛ Ղարաբաղի, թե՛ Հայաստանի գոյության համար: Այսօր մենք, ինչպես Բաթումից ու Ալեքսանդրապոլից առաջ, թերեւս Ղարաբաղի հարցի նպաստավոր լուծման եւ Հայաստանի բարգավաճման վերջին պատեհությունն ենք կորցնում: Եւ դրա համար մենք բոլորս էլ պատասխան ենք տալու մեր ժողովրդին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

(հատված 2007թ. հոկտեմբերի 26-ի ելույթից)[3]

Իսկ այժմ՝ համառոտակի անդրադարձ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդրին, որը, ինչպես բազմիցս առիթ ունեցել եմ ընդգծելու, Հայոց պետականության առջեւ կանգնած գերագույն խնդիրն է, քանզի գերազանցապես դրանից է կախված թե՛ Հայաստանի ու Արցախի ապագան, թե՛ մեր երկրների տնտեսական բարգավաճումը, եւ թե՛ հայ ժողովրդի բարօրությունը: Քանի դեռ չի լուծվել այդ հարցը, քանի դեռ չեն վերացել մեզ խեղդամահ անող շրջափակումները, քանի դեռ չեն կարգավորվել հարաբերությունները մեր անմիջական հարեւանների հետ, եւ քանի դեռ մեր երկիրը չի ինտեգրվել տարածաշրջանային ու միջազգային համակարգերում, Հայաստանն այսօրվա աշխարհի պահանջներին զուգընթաց զարգանալու եւ հզորանալու հնարավորություն չունի, որքան էլ բազմաթիվ լինեն հակառակը պնդողները:

Լեռնային Ղարաբաղի հարցը սկզբից եւեթ ինձ համար եղել է ոչ թե հողի կամ տարածքի, այլ բացառապես մարդու իրավունքների հարց: Աշխարհից կտրված մի լեռնազանգվածում ապրում է 150 հազար մարդուց բաղկացած մի ժողո-

[3] ***Լեւոն Տեր-Պետրոսյան***, *Վերադարձ, Երեւան, 2007, էջ 36-41:*

վուրդ, որն ընդամենը ուզում է նույնքան ազատ, հպարտ, երջանիկ ու ապահով լինել, որքան ֆրանսիացին, գերմանացին, անգլիացին կամ ամերիկացին: Սակայն, բանից պարզվում է, որ դա չի հետաքրքրում միջազգային հանրությանը: Աշխարհը, որն այդքան հոգ է տանում անհատ մարդու իրավունքների պաշտպանությանը, 150 հազար մարդուն մարդ չի համարում: Դա պարզապես դիտվում է որպես վիճակագրական փաստ, իսկ լավագույն դեպքում՝ ազգային փոքրամասնություն, որի տակ սովորաբար հասկացվում է էքստրատերիտորիալ փոքրամասնություն: Բայց քանի որ, ի դժբախտություն միջազգային հանրության, Ղարաբաղը էթնո-տերիտորիալ միավոր է, նրա վրա չեն կարող տարածվել ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող միջազգային կոնվենցիաները: Հետեւաբար, մնում է միայն հարցի մեկ լուծում, այն է՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի իրացումը: Այլ լուծումները բացառվում են ոչ թե հայերի եւ ադրբեջանցիների օրգանական անհամատեղելիությամբ, ինչպես հայտարարել է Ռոբերտ Քոչարյանը, ոչ էլ կրոնական անտագոնիզմով, ինչպես պնդում են ուրիշները, այլ քաղաքական այն ակնհայտ իրողությամբ, որ Ադրբեջանն ի վիճակի չէ երաշխավորել Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունը, ազատությունը եւ բարօրությունը:

Շուրջ մեկ ամիս առաջ ունեցած իմ ելույթում ես հարկադրված էի ցավով արձանագրել, որ Հայաստանի ներկա իշխանությունների վարած հանցավոր քաղաքականության պատճառով վերջին տաս տարիների ընթացքում Ղարաբաղի հարցի կարգավորումը հասել է համարյա անհուսալի վիճակի, քանի որ Ադրբեջանը, օր-օրի կոշտացնելով իր դիրքը, այսուհետեւ ոչ մի փոխզիջման չի գնալու: Ո՞րն էր այսպիսի հոռետեսական գնահատականի հիմքը: Ո՛չ այնքան այն, որ Հայաստանը բանակցություններում միաժամանակ ներկայացնելով նաեւ Ղարաբաղի հանրապետությունը, վերջինիս փաստորեն դուրս է մղել կարգավորման գործընթացից, նրան զրկելով ԵԱՀԿ-ի բանաձեւերով սահմանված [illegible] մարտության լիիրավ կողմի կարգավիճակից, ո՛չ էլ Ղարաբաղի հարցը ինքնորոշման իրավունքի հարթությունից անխոհեմաբար վիճելի տարածքի հարթություն տեղափոխելու փաստը, որքան անհամեմատ ավելի կարեւոր ու չափազանց ցավալի մի իրողություն:

Հայաստանի իշխանությունները տաս տարի շարունակ, աշխարհին հիմարի տեղ դրած, ձեւացրել են, թե անկեղծորեն շահագրգռված են Ղարաբաղի հարցի շուտափույթ կարգավորմամբ՝ իրականում, սակայն, հետապնդելով բոլորովին այլ նպատակ, այն է՝ ամեն կերպ խափանել ու վիժեցնել այդ գործընթացը: Մեր պետական այրերի խաղաղասիրական հայտարարությունները, փոխզիջումների պատրաստակամության վերաբերյալ տված հավաստիացումները, իբրեւ թե կոնստրուկտիվ նախաձեռնությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ էժանագին բլեֆ՝ միջազգային հանրությանը խաբելու եւ ստատուս-քվոն պահպանելու համար: Նրանց թվացել է, թե ԵԱՀԿ-ի միջնորդներն այնքան միամիտ են, որ կընկնեն թակարդը եւ զերծ կմնան իրենց վրա ճնշումներ բանեցնելուց: Եթե միջնորդները մինչ այժմ ձեւացրել են, թե հավատում են հայկական կողմի անկեղծությանը, դա ամենեւին չի նշանակում, որ նրանք չեն հասկացել վերջինիս պարզունակ խաղը: Այն, որ նրանք մեծ ջանք չեն թափել կողմերին սկզբունքային համաձայնության բերելու ուղղությամբ, բացատրվում է պարզապես այն պատճառով, որ գերտերությունների առաջնահերթությունների շարքում Ղարաբաղի հարցն զբաղեցնում է, թերեւս, հազարերորդական տեղ: Հայաստանի իշխանություններն, անթաքույց հրճվանքով, այս ամենը համարում են իրենց մեծագույն հաջողությունը, քանի որ, ըստ նրանց, դա նպաստում է ղարաբաղյան ստատուս-քվոն պահպանելու ծրագրին:

Ստատուս-քվոյի պահպանման ձգտումը հիմնված է այն փիլիսոփայության վրա, որ միջազգային հանրությունը վաղ թե ուշ հաշտվելու է կատարված փաստի հետ ու վերջիվերջո ճանաչելու Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Տեսականորեն սա ճիշտ փիլիսոփայություն է, մանավանդ պատմական առումով հիմնավորված մի քանի գործնական նախադեպերով: Ամբողջ խնդիրն այն է, ինչպես դեռ տաս տարի առաջ մի առիթով նշել էի, թե Հայաստանն ունի՞, արդյոք, 20–30 տարի ստատուս-քվոն պահպանելու հնարավորություն, նրա ռեսուրսները կբավարարե՞ն, արդյոք, զարգացնելու սեփական տնտեսությունը, հաղթահարելու շրջափակումների եւ մեկուսացման հարուցած խոչընդոտները, եւ վերջապես՝ մեր երկիրը կդիմանա՞, արդյոք, Ադրբեջանի հետ մրցակցությանը:

Ստատուս-քվոն ոչ թե քարտեզ է, ոչ թե զինադադարի գիծ, այլ ուժերի կայուն հավասարակշռություն: Այս տեսանկյունից հարցը դիտարկելիս, ցավով պետք է արձանագրել, որ մենք գտնվում ենք բավականին մտահոգիչ, եթե չասենք, անմխիթար վիճակում: Եթե սրանից տաս տարի առաջ Հայաստանը եւ Ադրբեջանն իրենց մարդկային, տնտեսական եւ ռազմական ռեսուրսներով քիչ թե շատ համադրելի ուժեր էին, ապա այսօր, նույն չափորոշիչներով, նրանց միջեւ առաջացել է ահռելի ճեղքվածք, որը խորանալու միտում ունի: Մակրոտնտեսական ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ բոլոր բնագավառներում Հայաստանի տնտեսական զարգացման տեմպերը տարեցտարի ավելի ու ավելի ետ են մնում Ադրբեջանի զարգացման տեմպերից: 1997–2006 թվականների կտրվածքով Հայաստանի համախառն ներքին արդյունքն աճել է մոտավորապես 4, իսկ Ադրբեջանինը՝ ավելի քան 5 անգամ; արդյունաբերական արտադրանքի աճը Հայաստանում կազմել է 3 անգամ, Ադրբեջանում՝ 5,3 տասնորդական անգամ; բյուջեն՝ Հայաստանում 3,8 տասնորդական անգամ, Ադրբեջանում՝ 5 անգամ, տահանումը՝ Հայաստանում 4, Ադրբեջանում՝ 8 անգամ, տաքին առեւտրի հաշվեկշիռը 2006թ. տվյալներով՝ Հայաստանում բացասական (1 միլիարդ 190 միլիոն դոլար), Ադրբեջանում դրական (1 միլիարդ 104 միլիոն դոլար): Արդեն իսկ հայտնի է, որ 2007 թվականի ցուցանիշների ամփոփումը մեզ համար ավելի տխուր պատկեր է ներկայացնելու:

Չեմ կասկածում, որ վաղն իմ ընդդիմախոս-բարեկամները հայտարարելու են. «Այսպիսի տվյալներ հրապարակելով՝ Տեր-Պետրոսյանը պարտվողական տրամադրություններ է սերմանում եւ մտադիր է հող նախապատրաստել Ղարաբաղն Ադրբեջանին ծախելու համար»: Կանխավ դիմելով նրանց, թախանձում եմ. «Հանգստացեք հարգելիներս: Դադարեք զբաղվել դեմագոգիայով: Բավական է հայրենասիրական ճառերով մոլորեցնել ժողովրդին: Բավական է նրանից թաքցնել ճշմարտությունը: Ժողովուրդն ավելի խելոք, տրամաբանող ու բանական է, քան ձեզանից շատերը»: Մեկանգամընդմիշտ **պետք** է գիտակցել՝ Հայաստանի ոչ մի նախագահ, ամենամեծ ցանկության դեպքում անգամ, չի կարող ծախել Ղարաբաղը: Նախ եւ առաջ այն պատճառով, որ Ղարաբաղի բախտը պետք է վճռի ոչ թե Հայաստանը կամ Ադրբեջանը, այլ միայնումիայն Ղարաբաղի ժողովուրդը: Եւ երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1992 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ՝ Հայաստանը չի կարող ստորագրել որեւէ փաստաթուղթ, որտեղ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»:

Ո՞րն է, արդ, պարտվողականությունը՝ ժողովրդին անգիտության մեջ պահելով ու նրա զգոնությունը բթացնելով, մի օր արթնանալ ու տեսնել, որ Ղարաբաղը չկա, թե՞ ճշմարտությունը բացահայտելով ու ահազանգ հնչեցնելով, փորձել համախմբել ազգի ուժերը՝ այդ վերահաս վտանգը կանխելու համար: Մեծագույն հարգանք տածելով մեր ժողովրդի

նկատմամբ, ես միշտ ապավինել եմ ոչ թե նրա զգացմունքներին, այլ բանականությանը: Երբեք չեմ թաքցրել ճշմարտությունը նրանից, որքան էլ այն դառը լինի: Երբեք սուտ խոստումներ չեմ տվել ու չեմ զբաղվել ամբոխավարությամբ կամ ամբոխահաճությամբ՝ դեմագոգիայով եւ պոպուլիզմով: Եւ այսուհետեւ էլ չեմ պատրաստվում դավաճանել այդ սկզբունքներին: Թո՛ղ դա դիտվի որպես ոչ շահավետ քաղաքական վարքագիծ: Թո՛ղ ազդի իմ վարկանիշի վրա: Ես այն եմ, ինչ կամ ու լինելու եմ: Այդպիսին էի ես նաեւ 1988-ին, եւ դուք հասկացաք ու վստահեցիք ինձ ու «Ղարաբաղ կոմիտեի» իմ ընկերներին, ինչի արդյունքը անկախ Հայաստանն է ու ազատագրված Արցախը: Համոզված եմ, այս անգամ եւս կհասկանաք ու կվստահեք:

Այս ակամա քնարական զեղումից հետո, կրկին վերադառնանք Ղարաբաղի խնդրին: Եռանախագահության կողմից ներկայումս շրջանառության մեջ դրված ոչ-պաշտոնական փաստաթուղթը, որին «սկզբունքորեն» համաձայնել է Հայաստանը, ոչ այլ ինչ է, եթե ոչ տաս տարի առաջ մերժված փուլային տարբերակը: Այսպիսով, Հայաստանի ներկա իշխանություններն, այդքան տարիներ կորցնելուց ու դիվանագիտական աճպարարություններից (Վանոն կասեր՝ մայմունություններից) հետո, ինչի հետեւանքներն, ինչպես տեսանք, ավերիչ են, սուսիկ-փուսիկ համաձայնել են մի ծրագրի, որը ժամանակին ջանադրաբար ներկայացնում էին որպես պարտվողական, դավաճանական եւ այլն: Դա կարող է ունենալ երկու բացատրություն. կա՛մ սա մեր իշխանությունների հերթական բլեֆն է՝ միտված նորից ձգձգելու հարցի լուծումը, կա՛մ էլ, եթե ավելի լավատեսորեն գնահատենք, նրանք վերջապես հասկացել են, որ Ղարաբաղի կարգավիճակի շուրջ կողմերի տրամագծորեն հակադիր դիրքորոշումների պատճառով, կարգավորման փուլային տարբերակն, ինչպես անցյալում, այսօր էլ այլընտրանք չունի:

Համանախագահների մշակած խնդրո առարկա թղթում, կողմերի դեմքը փրկելու համար, ավելացված է, գրված մի անորոշ կետ Ղարաբաղում անցկացվելիք հանրաքվեի կամ ժողովրդական հարցման՝ պլեբիսցիտի մասին: Փաստաթուղթն իբրեւ թե համաձայնեցված է շուրջ 99 տոկոսով, եւ մնում է ընդամենը մի քանի մանրամասն, որոնց առնչությամբ կողմերը դեռեւս չեն հարթել իրենց տարաձայնությունները: Մանրամասնություն կոչվածները, սակայն, կարող են այնքան սկզբունքային լինել, որ չհաղթահարվեն դեռեւս երկար ժամանակ: Ադրբեջանը, հույսը դրած նավթադոլարների վրա, բոլորովին չի շտապում, իսկ Հայաստանը, չգիտես ինչին ապավինած, հարցը լուծելու անհրաժեշտ կամք չի դրսեւորում: Ավելին, լուրջ հիմքեր կան պնդելու, որ եթե հարթվեն անգամ բոլոր տարաձայնությունները, միեւնույն է, Քոչարյանը, իր սովորության համաձայն, խուսափելով պատասխանատվությունից, փաստաթուղթը չի ստորագրի՝ այդ բեռը բարդելով հաջորդ նախագահի ուսերի վրա: Մի խոսքով՝ փակուղային մի վիճակ, որում, Քոչարյանից բացի, մեղքի իր բաժինն ունի Վարդան Օսկանյանը, եւ մասամբ՝ Արկադի Ղուկասյանը, որը Ղարաբաղի, որպես հակամարտության լիիրավ կողմի, միջազգային մանդատը զիջել է Հայաստանի նախագահին:

Իրավիճակից դուրս գալու ելքը թեեւ դժվարհաղթահարելի, բայց միանգամայն հստակ է.

Առաջին. նախ եւ առաջ պետք է մաքրել սեփական ախոռները եւ համաժողովրդական հուժկու ալիքով խափանել ներկա հանցավոր ռեժիմի վերարտադրությունը; վերականգնել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը; անհաշտ պայքար հայտարարել կոռուպցիայի, հովանավորչության, պաշտոնեական չարաշահումների դեմ; ստեղծել հիրավի ժողովրդավարական, իրավական, ազատ եւ արդար պետություն՝ քաջ գիտակցելով, որ Ղարաբաղի ապագան լիովին կախված է Հայաստանի հզորությունից:

Երկրորդ. անհրաժեշտ է վերադառնալ Ղարաբաղի հարցի կարգավորման նախկին ձեւաչափին, որում Ղարաբաղը ներկայացված էր որպես հակամարտության լիիրավ կողմ: Հասկանալի է, որ դա անհնար է պատկերացնել Սերժ Սարգսյանի նախագահ ընտրվելու պարագայում, որը նույնպես ղարաբաղցի լինելով, Քոչարյանի նման հավակնելու է բանակցություններում ներկայացնել նաեւ Ղարաբաղյան կողմը:

Երրորդ. արմատապես հարկ է փոխել Ղարաբաղի հարցի կարգավորման գործընթացում Հայաստանի ներկա իշխանությունների վարած անհեռանկար եւ վտանգավոր քաղաքականությունը, այսինքն՝ խնդրի լուծումը ձգձգելու, ստատուս-քվոն պահպանելու փիլիսոփայությունից անցում կատարել հարցը լուծելու փիլիսոփայությանը:

Եւ չորրորդ. անիմաստ է վախենալ կամ խուսափել փոխզիջումներից, որովհետեւ այլ լուծում բնության մեջ գոյություն չունի: Քաղաքականության մեջ, ինչպես բիզնեսում, հաջող են համարվում միայն այն գործարքները, որոնցից շահում են երկու կողմերը: Երբ շահում է միայն մեկ կողմը, գործարքն ամենեւին հաջողված կամ տեւական չի կարող լինել:

«ԻԼՈՒՐ»-Ի ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ

(11 ապրիլի, 2016թ.)[4]

– Պարոն նախագահ, առանց չափազանցության, Ձեր նախաձեռնությամբ Սերժ Սարգսյանի հետ կայացած հանդիպումը սենսացիոն անակնկալ էր բոլորի համար: Ինչո՞վ դա կբացատրեք:

– Իմ գործունեությանը հետեւած մարդկանց համար դա բոլորովին անակնկալ չպետք է լիներ, որովհետեւ Հայաստանին ու Ղարաբաղին սպառնացող վտանգի պահերին, անկախ իշխանությունների հետ ունեցած լուրջ հակասություններից, ես միշտ էլ հանդես եմ եկել նմանատիպ նախաձեռնություններով: Հիշեք 1999թ. հոկտեմբերի 28-ի իմ հայտարարությունը, «Ցեղասպանության 100-ամյակի հոչակագրին» նվիրված հրապարակային առաջարկս, եւ վերջապես, Հայ Ազգային Կոնգրեսի ս.թ. ապրիլի 2-ի՝ իմ հավանությամբ ընդունված հայտարարությունը:

– Իսկ ինչպե՞ս Սերժ Սարգսյանին փոխանցեցիք հանդիպման առաջարկը՝ միջնորդի միջոցով, թե՞ անմիջականորեն: Գուցե սա մանրուք թվա, բայց ամեն դեպքում հետաքրքիր է հասարակության համար:

[4] *iLur.am, 11.04.2016թ.:*

– Այս հարցում ոչ մի խորհրդավորություն չպետք է փնտրել: Քանի որ ես բաց, ոչ կուլիսային քաղաքականության կողմնակից եմ, հասարակությունից թաքցնելու բան չունեմ: Ապրիլի 5-ին ես Սերժ Սարգսյանին ուղարկեցի հետեւյալ ձեռագիր նամակը. «Սերժ, չե՞ս կարծում, որ ստեղծված իրավիճակում մեր հանդիպումը, լավատեսական լիցք հաղորդելով հասարակությանը, դրական կընկալվի թե՛ հայ ժողովրդի, թե՛ միջազգային հանրության կողմից: Խոսակցությունը, բնականաբար վերաբերելու է իրավիճակից պատվով ու առանց քաղաքական կորուստների դուրս գալու խնդրին, ինչպես նաեւ ՀՀ-ի կողմից ԼՂՀ-ի ճանաչման եւ Հայաստանի ու Ղարաբաղի միջեւ ռազմական փոխօգնության պայմանագրի կնքման շրջանառվող գաղափարների նպատակահարմարությանը: Որպես պրոպագանդիստական հնարքներ այդ գաղափարները, թերեւս, իմաստ ունեն, բայց դրանց իրականացումը, կարծում եմ, պետք է լինի ոչ թե պահի թելադրանքով պայմանավորված իմպուլսիվ արձագանք, այլ լրջագույն խորհրդապահական քննարկման ու ճշգրիտ հաշվարկի հետեւանք: Հանդիպման վայրի ու ժամի ընտրությունը մնում է քո հայեցողությանը: Հանդիպման փաստի հրապարակման մեջ ազատ ես նշելու, որ այն տեղի է ունեցել իմ նախաձեռնությամբ: Տեսանյութի կամ լուսանկարի կարիք չկա, քանի որ, գիտես, ցուցադրական բաներ չեմ սիրում»: Քանի որ հաջորդ օրերին Սերժ Սարգսյանը լինելու էր Գերմանիայում, նա ինձ հեռախոսով պատասխանեց, որ կհանդիպենք վերադառնալուց հետո իմ տանը, ինչը եւ տեղի ունեցավ:

– Այնուամենայնիվ Հայաստանի իշխանությունների եւ մասնավորապես Սերժ Սարգսյանի հետ Ձեր ունեցած չափազանց բարդ հարաբերությունների, փոխադարձ խիստ մեղադրանքների առկայության պարագայում անհնար էր պատկերացնել, որ մեր իրականության մեջ այդպիսի քաղաքակիրթ հանդիպում կարող է կայանալ, պատիվ է բերում թե՛ Ձեզ, թե՛ Սերժ Սարգսյանին:

– Նախ՝ քաղաքական վարվեցողության ասպարեզում ոչինչ անհնար չէ, եւ երկրորդ՝ ինչն անհնար է թվում մեր իրականության մեջ, ամենեւին անհնար չէ նորմալ, կայացած պետություններում: Արտաքին վտանգի առաջացման դեպքերում այդպիսի երկրներում սովորաբար, կամ որպես կանոն, ներքին հակասությունները ժամանակավորապես մի կողմ են դրվում եւ բոլոր առողջ քաղաքական ու հասարակական ուժերի ջանքերն ուղղվում են ազգային միասնության կայացմանն ու վտանգի համատեղ դիմակայմանը: Եթե մեզ մոտ դեռ, ցավոք, այդպես չէ, ապա դա բացատրվում է այն պարզ հանգամանքով, որ լինելով ընդամենը 25 տարվա անկախությամբ օժտված պետություն, մեզ մոտ առայժմ բացակայում են պետական մտածողության անհրաժեշտ ավանդույթները: Թեեւ այս առումով բավականին հուսադրող պետք է համարել ղարաբաղա-ադրբեջանական վերջին ռազմական դիմակայության օրերին Հայաստանի քաղաքական ուժերի, հասարակական խավերի եւ ազատամարտիկների ինքնաբուխ համախմբման օրինակելի դրսեւորումը:

– Դատելով էլեկտրոնային մամուլի եւ ֆեյսբուքյան արձագանքներից, հասարակությունն իսկապես նկատելիորեն հուսադրվել ու դրական է գնահատել Ձեր եւ Սերժ Սարգսյանի հանդիպումը, բայց կան նաեւ, մեղմ ասած, կասկածամիտներ ու չարակամներ, ովքեր ուզում են ստվեր նետել այդ փաստի վրա:

– Դավադրության տեսության կողմնակիցներ ու ամեն ինչի ետեւում խարդավանքներ որոնողներ միշտ էլ եղել են ու կլինեն: Բայց սովորաբար այդպիսի մարդիկ քաղաքական գործընթացների վրա որեւէ ազդեցություն չեն գործում, ուստի անիմաստ է նրանց ասածներին ուշադրություն դարձնել: Կարեւորը հասարակության մեծամասնության կարծիքն է:

– Շատերի ընկալմամբ՝ Ղարաբաղյան կարգավորման գործընթացի վերաբերյալ տարիներ առաջ Ձեր կատարած կանխատեսումներն իրականանում են: Դուք ի՞նչ կարծիքի եք դրա մասին:

– Կանխատեսություն ասվածի մեջ մոգական բան չպետք է փնտրել. դրանք ընդամենը եղել են գնահատականներ, բխած քաղաքական գործընթացների զարգացման միտումների իմ ըմբռնումից: Եթե ոմանց թվում է, թե ես պետք է բավարարված լինեմ իմ «կանխատեսումների» իրականացման փաստից, ապա այդ մարդիկ մոլորվում են: Ես շատ ավելի ուրախ կզգայի, որ սխալված լինեի ու դրանք չիրականանային: «Բա որ ասում էի» տիպի «խորիմաստ» մտքերն ինձ համար անպտուղ տափակաբանություններ են: Որ ասում էիր, քեզ ժամանակին պիտի լսեին: Հիմա այդ ասածներդ որեւէ արժեք չունեն: Ո՞ւմ է պետք հետին խելքը:

– Պարոն նախագահ, Ձեր կարծիքով, ի՞նչ նպատակ էր հետապնդում Ադրբեջանի սանձազերծած վերջին արյունալի ռազմական արկածախնդրությունը:

– Ղարաբաղա-ադրբեջանական լայնածավալ սահմանային բախումն ինձ հիշեցնում է 1973թ. արաբա-իսրայելյան, այսպես կոչված, «Յոմ Կիպուրի» պատերազմի սցենարը: Քանի որ, վստահաբար, շատերը ծանոթ չեն այդ սցենարին, ըստ երեւույթին, հարկ կա մի քանի բառով բացատրել նրա էությունը: Պատերազմը, Իսրայելի համար լիովին անակնկալ, սկսվեց Եգիպտոսի եւ Սիրիայի հուժկու նախահարձակմամբ: Ու թեեւ ի վերջո այն ավարտվեց արաբական կողմի պարտությամբ, սակայն ռազմական գործողությունների ծավալման սկզբնական շրջանում ձեռքբերած լուրջ հաջողության շնորհիվ Եգիպտոսի ղեկավարությունը, նախագահ Անվար Սադաթի գլխավորությամբ փրկեց իր դեմքը, եւ դա հաղթաթղթի վերածելով, 1979 թվականին Քեմփ-Դեվիդում, համարձակորեն հաշտություն կնքեց ու դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Իսրայելի հետ, այդ[illegible] ետ ստանալով նաեւ Սինայի թերակղզին: Նույն [illegible] ուրեմն, Ալիեւը, թեեւ մեծ զոհերի գնով, անակնկալ գործողության շնորհիվ հայկական կողմին զգալի մարդկային կորուստներ պատճառելու եւ մի քանի դիրքեր գրավելու փաստի սիմվոլիկ «հաղթաթղթով» փորձելու է շահել սեփական ժողովրդի համակրանքը եւ ուժեղացնել իր դիրքերը Ղարաբաղյան կարգավորման առաջիկա բանակցություններում:

– Իսկ ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է, որ զինադադարի լուրջ խախտումները կրկնվեն:

– Քանի որ հրադադարը կնքվեց Ռուսաստանի միջամտությամբ, դա նշանակում է, որ, մանր-մունր փոխհրաձգությունները չբացառած, Ռուսաստանն ի վիճակի է թույլ չտալ զինադադարի լայնածավալ խախտումները: Որպես հետեւանք, այս հանգամանքը, բնականաբար, մեծացնում է Ռուսաստանի դերը Ղարաբաղյան կարգավորման առաջիկա բանակցություններում:

– Եթե գաղտնիք չէ, կարո՞ղ եք ասել, թե ինչ փաստաթուղթ է դրվելու բանակցությունների սեղանին եւ արդյոք այն պարունակելո՞ւ է որոշ տարածքների վերադարձմանը եւ խաղաղապահ ուժերի տեղակայմանը վերաբերող դրույթներ:

– Այդ հարցը ցույց է տալիս, թե ինչպիսի շփոթ են ստեղծել մեր հարգելի վերլուծաբաններն ու քաղաքագետները: Քննարկվելիք փաստաթուղթը վաղուց հայտնի է եւ կոչվում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման Մադրիդյան սկզբունքների հիման վրա մշակված եւ կողմերի միջեւ մեծ մասամբ համաձայնեցված ծրագիր, որը պարունակում է թե՛ տարածքների վերադարձմանը, թե՛ խաղաղապահ ուժերի տեղակայմանը վերաբերող հոդվածներ: Մադրիդյան սկզբունքներն ու նրանց հիման վրա մշակված

համապարփակ ծրագիրը բազմիցս հաստատվել են Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների համատեղ հայտարարություններով, արժանացել են Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների սկզբունքային համաձայնությանը: Մադրիդյան սկզբունքները որդեգրել է Ռոբերտ Քոչարյանը, եւ նրան այդ հարցում անվերապահորեն սատարել են նրա վարչախմբի մաս կազմող կուսակցությունները: Քոչարյանն է Ղարաբաղին զրկել հակամարտության իրավահավասար կողմի միջազգայնորեն ճանաչված կարգավիճակից: Ի դեպ, նա է ընդառաջել նաեւ Ցեղասպանության փաստի ուսումնասիրության նպատակով հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողովի ստեղծման թուրքական առաջարկին: Սերժ Սարգսյանն, ըստ այդմ, այս ամենը ժառանգել է Քոչարյանից, եւ նրա պատասխանատվության չափը թվարկված հարցերում ավելին չէ, քան վերջինիս վարչախմբի մասը հանդիսացած մյուս դերակատարներինը: Ես գնահատականներ չեմ տալիս, այլ ընդամենն արձանագրում եմ առկա անժխտելի իրողությունները:

– Շնորհակալություն այս հանգամանալից պարզաբանումների համար, իսկ այժմ մի վերջին հարց. ի՞նչ դիրք պետք է որդեգրի հայկական կողմը սպասվող բանակցություններում, եւ ի՞նչ պարտավորություններ պետք է ստանձնեն ընդդիմադիր քաղաքական ուժերն ու հասարակությունը տվյալ խնդրում:

– Հայկական կողմը, բնականաբար, կոշտ, բայց կառուցողական մոտեցումով բանակցությունների արդյունքում պետք է ձգտի ձեռքբերել հնարավոր առավելագույնը: Իսկ ինչ վերաբերում է ընդդիմադիր ուժերի եւ հասարակության դերակատարությանը, ապա դա պետք է լինի ներքին տարաձայնությունները ժամանակավորապես սառեցնելուց եւ ազգային համախմբվածությունից բացի, ոչինչ ավելի: Հիմա սխալների ու բացթողումների համար իշխանություններին մեղադրելու եւ նրանցից հաշիվ պահանջելու ժամանակ չկա: Պատերազմը շուտով ռազմի դաշտից տեղափոխվելու է դիվանագիտության կամ դժվարագույն բանակցությունների ճակատ: Պաշտոնի բերումով այդ պատերազմի հրամանատարները մեր կողմից լինելու են Սերժ Սարգսյանն ու Բակո Սահակյանը: Եթե անգամ Սահակյանն անմիջականորեն չմասնակցի բանակցություններին, Սերժ Սարգսյանը ոչ մի պարագայում չի կարող հաշվի չառնել նրա կարծիքը (ի դեպ, ես պայմանավորվածություն ունեմ հանդիպելու նաեւ վերջինիս հետ): Բանակցությունների սեղանի շուրջ Սերժ Սարգսյանը պետք է իրեն ուժեղ զգա, ունենալով իր ժողովրդի աջակցությունը: Բայց, միաժամանակ, արտաքին վտանգի պահերին կարիքն ունենալով այդ աջակցությանը, նրա գլխավորած վարչախումբը պարտավոր է որոշակի դրական քայլեր կատարել, դեմքով շրջվել դեպի ժողովուրդը, իրական պայքար մղել կոռուպցիայի, իրավապահ մարմինների կամայականությունների, մենաշնորհների սանձարձակության, ընտրակեղծարարության, պետական պաշտոնյաների ամբարտավանության դեմ: Իշխանությունների եւ հասարակության հարաբերությունները պետք է կառուցվեն ոչ թե միակողմանի վերաբերմունքի, այլ փոխվստահության եւ փոխաջակցության վրա: Չի կարելի անհոգության ժամանակներում արհամարհել ժողովրդին ու ընդդիմությանը, իսկ դժվարին պահերին ակնկալել նրանց աջակցությունը:

ՎԵՐՋԱԲԱՆ

«Պատերազմ, թե՞ խաղաղություն» հարցադրումը, որ 1997 թվականին դարձավ խիստ որոշակի՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրին նվիրված՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտնի հոդվածի վերնագիր, իր ընդհանրական-քաղաքական իմաստով կարող է վերնագիր դառնալ մեր պատմության վերջին՝ Ղարաբաղյան շարժման սկզբնավորումից առ այսօր ընկած շուրջ երեք տասնամյակի համար:

Դեռ 1988 թվականի օգոստոսին «Ղարաբաղ» կոմիտեի կողմից հրապարակված՝ Հայոց համազգային շարժման առաջին ծրագրի «գաղափարական սկզբունքները» բաժնում, ի թիվս այլ՝ հայ քաղաքական մտքի համար հեղափոխական դրույթների, արձանագրվում էր նաեւ հետեւյալը. **«Մեր սկզբունքն է՝ խաղաղ եւ երջանիկ ապրել հարեւան բոլոր ժողովուրդների հետ... խաղաղությունը եւ համերաշխությունն ամուր են լինում, երբ հիմնվում են արդարության վրա, երբ չեն ոտնահարվում որեւէ ժողովրդի իրավունքները»**: Համաժողովրդական շարժման որդեգրած այս սկզբունքը Հայաստանի առաջին ժողովրդավար իշխանության ու անձամբ նրա ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանի համար դարձավ գործնական քաղաքականության առաջնային խնդիրը, պետականության կառուցման թիվ մեկ հիմնադրույթն ու ելակետը:

Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ նրա ղեկավարած իշխանության համար քաղաքական այս գիծն առաջնային եւ առանցքային մնաց ամբողջ ընթացքում՝ թե՛ նախապատերազմական լարված շրջանում, թե՛ բուն պատերազմի ընթացքում, թե՛, առավել եւս, տարած հաղթանակներից ու կնքած զինադադարից հետո: Այո՛, պարտադրված պատերազմ մղած ու պատերազմ հաղթած նախագահի քաղաքական գործունեության մեխը կամ առանցքը մշտապես եղել է խաղաղությունը, եւ այս բանը հավաստող, ապացուցող նյութերը, նաեւ այդ շրջանի համար, մի ամբողջ հատոր կարող են կազմել: Քաղաքական նույն գիծը նրա համար մնաց առաջնային եւ առանցքային նաեւ որպես ընդդիմության առաջնորդ՝ վերջին տասնամյակում: Այլ կերպ չի կարող լինել պետական գործչի համար, որի մտահոգության առարկան բացառապես երկիրն է, պետությունը, ժողովուրդը եւ ոչ թե անձնական կամ կուսակցական շահերը: Եւ նույնպիսի մի հատոր կարող են կազմել նաեւ այս փաստը հավաստող եւ հաստատող նյութերը:

Որտեղի՞ց է գալիս խաղաղության՝ որպես քաղաքական կենսական գործիքի մասին անխաթար այս համոզմունքը. մեր պատմության հազարավոր տարիների փորձի՞ց, երբ ազգային կյանքի քաղաքական, մշակութային, տնտեսական եւ այլ առումներով արգասաբեր շրջանները համընկել են խաղաղության տասնամյակների հետ, գուցե պատմական հակառակ փորձի՞ց՝ նկատի ունենալով, օրինակ՝ 1918-1920 թվականների ձախող ու կորստաբեր շրջանը, իրատեսական քաղաքական հաշվարկի՞ց՝ մեկնակետ ունենալով արդի ակնհայտ աշխարհաքաղաքական իրողությունները, միջազգային իրավունքը, եղած սեփական ռեսուրսները եւ այլն: Հավանաբար՝ բոլորից միասին:

Խնդիրը, որին վերաբերում է Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Հայ Ազգային Կոնգրեսի 2-րդ (20-րդ) համագումարի հրապարակվող ելույթը, նրա ողջ քաղաքական գործունեության միջով անընդհատ եւ ուղիղ ձգվող առանցքային գծի տրամաբանական շարունակությունն է: **Դա խաղաղության, բոլոր հարեւանների հետ հաշտ ապրելու, բարիդրացիական հարաբերություններ ունենալու դրույթն է:** Այս կերպ է միայն պատկերանում Հայաստանի՝ որպես ազգային պետության գոյությունը, զարգացումը, հզորացումը, որպես հայ ժողովրդի գոյության եւ ազգային ինքնության պահպանման երաշխիքի, դերակատարությունը: Այս դեպքում Հայաստան ասելով, բնականաբար, նկատի ունենք նաեւ Լեռնային Ղարաբաղը:

Անհեթեթ կլինի այն պնդումը, թե քիչ թե շատ ռացիոնալ որեւէ հասարակության մեջ պատերազմի կողմնակիցներն ավելի շատ կարող են լինել, քան խաղաղության: Սակայն խաղաղությունը մի որակի իշխանություն է պայմանավորում, պատերազմը՝ բոլորովին այլ որակի: Իսկ պատերազմն էլ երբեք ուղիղ ու բացահայտ չի քարոզվում, այլ բազմազան «հայրենասիրական» կարգախոսների, իրականությունից կտրված առավելապաշտական ծրագրերի հանդերձավորմամբ, «մշտական թշնամու», «դարավոր ոսոխի» կերպարների կերտմամբ եւ այլն: 1990-1998 թվականներին Հայաստանում իշխանության էր խաղաղության կուսակցությունը: Նրան, այո՛, վիճակված էր պատերազմ վարել եւ հաղթական մի հանգրվանի հասնել՝ հենց հանուն արժանապատիվ հաշտության ու խաղաղության հաստատման:

Զինադադարի հաստատումից հետո ինտենսիվ բանակցությունների արդյունքում 1997 թվականին կարելի էր հասնել հակամարտության համապարփակ կարգավորման՝ ստանալով այն, ինչը Ղարաբաղյան շարժման, ապա Ղարաբաղյան պատերազմի տարիներին դժվար էր անգամ երազել: Կարգավորման այդ ծրագիրը մանրամասն ներկայացված է Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ 1997 թվականի սեպտեմբերի 26-ի

մամուլի ասուլիսում, ապա «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հայտնի հոդվածում: Դրանցում, ապա նաեւ Անվտանգության խորհրդի՝ 1998 թվականի հունվարի 8-ի ելույթում, մանրամասն նշված են նաեւ այն վտանգները, որոնք կառաջանան հարցի չկարգավորման, «ստատուս-քվոյին» կառչելու դեպքում:

Կարգավորումն անհնար դարձավ իշխանական ճգնաժամի՝ Հայաստանում առանցքային երեք պաշտոնյաների եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարության ընդդիմացման պատճառով, ովքեր հարցը տեղափոխելով վերոհիշյալ «հայրենասիրական» կարգախոսների, իրականությունից կտրված առավելապաշտական ծրագրերի հարթություն՝ կառչեցին ստատուս-քվոյի պահպանման գաղափարին:

Դրան հաջորդեց Հանրապետության նախագահի հրաժարականի հայտարարությունը, որի կենտրոնական միտքը հետեւյալն էր. *«...իշխանության ճգնաժամում Արցախի հարցի արծարծումն ընդամենը պատրվակ էր: Խնդիրը շատ ավելի խորն է եւ կապված պետականության հիմնադրույթների, խաղաղության ու պատերազմի այլընտրանքի հետ... Արտաքոց ոչինչ տեղի չի ունեցել. պարզապես Հայաստանում խաղաղության եւ արժանապատիվ հաշտության կուսակցությունը պարտություն է կրել»:*

Վտանգների ու կորուստների՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի բոլոր կանխատեսումները, արտահայտված վերոհիշյալ փաստաթղթերում, ցավոք, իրականացան.

– Հայաստանն, իրոք, Ադրբեջանի հետ համեմատության մեջ երբեւէ ավելի ուժեղ չեղավ, քան է՛ր 1997-98 թվականներին էր: Ուժերի հարաբերակցությունը բոլոր պարամետրերով փոխվել ու փոխվում է հօգուտ Ադրբեջանի:

– Հայաստանի տնտեսական կարողությունները վաղուց արդեն դժվարությամբ են կրում «ստատուս-քվոյի» պահպանման ծանրությունը:

– Միջազգային հանրությունն, իրոք, չի հանդիսանա... ստատուս-քվոյի պահպանման հետ եւ կողմերին շարունակում... է առաջարկել կամ պարտադրել կարգավորման միմիայն փոխզիջումային ծրագրեր:

– Ռուսաստանն, իրոք, հետագա տարիներին լուրջ ջանքեր գործադրեց Ադրբեջանի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու համար, եւ Հայաստանն այլեւս չունի Անդրկովկասում Ռուսաստանի միակ դաշնակիցը կամ ստրատեգիական գործընկերը լինելու առավելությունը:

– Այսօր, 18 տարի անց, բանակցությունների սեղանին դրված կարգավորման ծրագիրը ոչնչով առավել չէ, ավելին՝ կարեւոր դետալներում էականորեն զիջում է 1997 թվականին ներկայացված տարբերակներին:

– Սոցիալական վիճակի հետ միասին նաեւ կիսապատերազմական իրավիճակի հետեւանքով է, որ Հայաստանից եւ Լեռնային Ղարաբաղից չի դադարում վտանգավորության սահմանագծերն անցած արտագաղթը:

– Զրոյական արդյունք ունեցան շրջափակման պայմաններում տնտեսական զարգացման հնարավորության՝ կառավարման ինտենսիվացման շնորհիվ բյուջեի կրկնապատկման, արտաքին ներդրումների կտրուկ ավելացման, սփյուռքից տարեկան կես միլիարդ դոլարի օգնության ստացման՝ «հաղթողականների» փաստարկները:

– Հարեւանների հետ բնականոն հարաբերությունների բացակայության պատճառով Հայաստանը դուրս է մնացել տնտեսական զարգացման համար կենսական՝ տարածաշրջանային եւ միջազգային համակարգերից եւ ծրագրերից:

– Անցած 18 տարին, մասնավորապես՝ Ապրիլյան պատերազմը, ավելի քան ակնառու ցուցադրեցին, որ հակամարտության կարգավորման համար փոխզիջումն, իրոք, այլընտրանք չունի, որ դրա այլընտրանքը պատերազմն է:

– Ապացուցվեց նաեւ, որ 1998 թվականի իշխանական ճգնաժամում, իրոք, Ղարաբաղը միայն առիթ էր, իսկ իրական խնդիրն իշխանության գալու հնարավորության օգտագործումն էր, տրամագծորեն այլ որակի իշխանության հաստատումը, որի դեմքը վաղուց հայտնի է, եւ որի դառը պտուղները վաղուց ճաշակում ենք բոլորս:

Եղան նաեւ բաներ, որ անհնար էր անգամ նախապես կանխատեսել: Օրինակ՝ Հայաստանը, ի դեմս Ռ. Քոչարյանի, յուրացրեց ԼՂՀ-ի՝ հակամարտության կողմի միջազգայնորեն ճանաչված մանդատը՝ թուլացնելով հայկական կողմի ուժը եւ զրկելով նրան ճկունությունից: Ընդունվեցին միջազգային բարձր մակարդակի մի շարք փաստաթղթեր՝ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի համար աննպաստ ձեւակերպումներով եւ այլն:

Լեւոն Տեր-Պետրոսյանը, ինչպես նշում է այս տարվա ապրիլի 11-ին տված հարցազրույցում, երբեւէ չի հիշեցրել ու չի չարախնդացել իր վերոթվարկյալ կանխատեսումների ու զգուշացումների իրականացման առիթով. *«Եթե ոմանց թվում է, թե ես պետք է բավարարված լինեմ իմ «կանխատեսումների» իրականացման փաստից, ապա այդ մարդիկ մոլորվում են: Ես շատ ավելի ուրախ կզգայի, որ սխալված լինեի, ու դրանք չիրականանային: «Բա որ ասում էի» տիպի «խորհմաստ» մտքերն ինձ համար անպտուղ տափակաբանություններ են»:* Անկախ կարգավիճակից, Հանրապետության առաջին նախագահի խնդիրը միշտ եղել է ոչ թե իր ճշմարտացիությունը ցուցադրելը, այլ հարցի լուծումը, խաղաղության հաստատումը, դրան հնարավորինս օժանդակելը:

Ամենեւին պատահական չէ, որ 2007 թվականի հոկտեմբերի 26-ին, ակտիվ քաղաքականություն վերադառնալու եւ առաջիկա նախագահական ընտրություններում իր թեկնածությունն առաջադրելու հայտը ներկայացնելու առաջին հանրահավաքային ելույթի ընդարձակ մի գլուխը վերադարձ էր հենց Ղարաբաղի խնդրին:

Լեռնային Ղարաբաղի կամ, որ միեւնույն է՝ խաղաղության հաստատման խնդիրը միակն էր, այն գերկարեւորը, որի համար Լեւոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց Հանրապետության նախագահի պաշտոնից: Ղարաբաղի խնդիրը միակն է, այն գերկարեւորը, որի վտանգման դեպքում Լեւոն Տեր-Պետրոսյանը, այս անգամ՝ որպես ընդդիմության առաջնորդ, ընդհուպ դադարեցնում է իր գլխավորած ուժի ներքաղաքական պայքարը եւ ազգային համախմբման կոչով դիմում բոլորին: Եւ դա՝ թե՛ այն դեպքում, երբ Ղարաբաղին արտաքին ռազմական վտանգ է սպառնում, եւ թե՛ այն դեպքում, երբ կարգավորման բանակցությունների ինտենսիվ շրջանում անհրաժեշտ է ուժեղացնել հայկական կողմի դիրքերը: Այդպես եղել է մի քանի անգամ: Ապրիլյան պատերազմը եւ հետագա շրջանը դրա լավագույն օրինակն են. Առաջին նախագահի՝ պատերազմական իրադարձություններին անմիջապես տված հրապարակային արձագանքները եւ գործողությունները (իր նախաձեռնությամբ Սերժ Սարգսյանի հետ հանդիպումը, ապա Լեռնային Ղարաբաղ այցն ու Բակո Սահակյանի հետ հանդիպումը) վճռական դեր խաղացին այդ պահին ամենեւին ոչ միանշանակ հասարակական մթնոլորտի կտրուկ փոփոխության եւ արտաքին վտանգի դեմ ազգային համախմբման վճռորոշ գործոն դառնալու համար:

Ապրիլյան պատերազմին, Ռուսաստանի նախաձեռնությամբ եւ վճռորոշ դերակատարությամբ, հաջորդեց հակամարտության կարգավորման ինտենսիվ մի գործընթաց, որ դեռ իր ավարտին չի հասել: Սա հետպատերազմյան շրջանում հակամարտության կարգավորման ամենահիրական հնարավորություններից մեկն է: Նախընտրական շրջանի տրամաբանությունը, թերեւս, բոլորովին այլ թեմա, այլ

ասելիք եւ այլ վարքագիծ է հուշում: Մինչդեռ պետական գործչի հավատամքը թելադրում է այն, ինչ անում է Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ տալով հետեւյալ բացատրություն-պարզաբանումը.

«Ինչո՞ւ ենք, ուրեմն, մեր անցավ գլուխը փորձանքի տակ դնում: – Որովհետեւ Հայաստանում ճշմարտության երեսին ուղիղ նայող ուրիշ ուժ չկա: Եթե մենք էլ մյուսների պես լռենք, ողջախոհության ճրագը մեր երկրում վերջնականապես կմարի: Ուստի, անկախ այն բանից, թե մեզ ինչ պիտակներ կփակցնեն, ես Կոնգրեսին առաջարկում եմ խիզախաբար ընտրությունների գնալ «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» նշանաբանով: Դա չի կարող հասկացողություն չգտնել ժողովրդի ճնշող մեծամասնության մոտ, որովհետեւ Հայաստանի ու Ղարաբաղի փրկության, ապահովության ու զարգացման այլ ճանապարհ գոյություն չունի»:

Աշոտ Սարգսյան
Պատմական գիտությունների թեկնածու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից 5

Ելույթ Հայ Ազգային Կոնգրեսի
2-րդ համագումարում 7

Պատերազմ, թե՞ խաղաղություն.
լրջանալու պահը 31

Ելույթ Անվտանգության խորհրդի նիստում 51

Լեռնային Ղարաբաղի հակամարտության
կարգավորման ներկա վիճակը
(հատված 2007թ. հոկտեմբերի 26-ի ելույթից) 69

«Իլուր»-ի հարցազրույցը Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ..77

Վերջաբան 85

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԻԴՐԱՑԻՈՒԹՅՈՒՆ

LEVON TER-PETROSSIAN

PEACE
CONCILIATION
GOOD NEIGHBORHOOD

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
Երեւան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ + (374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ. / ֆաքս՝ + (374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am